

2935

Հայոց Գրադարան

№ 73

Վ. Վ. Վ Ա Դ Ո Վ Ո Զ Ո Վ

# ՍԱՀՄԱՆԱԳԻՐ

## ՃՈՂՈՎ

— — —

Թուրքի. Գ. Ք.

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ԱՇԽԱՏԱԲՈՅ» Գուլօփ. 39.

1918

9(47)

Հ. 77

Հ

9(47)  
1-77

MAY 2011  
24 JAN 2008

№ 72

«Յառաջի» Գրադարան

№ 72

300

634-40

Վ. Վ. ՎՈԴՈՎԶՈՎ

# ՍԱՀՄԱՆԱԴԻԲ

ՃՈՂՈՎ

12443



Թ Բ Ֆ Լ Ի Ս

Տպարան «ԱՇԽԱՏԱՎՈՐ» Գուղկ. 39.

1918

3411

12.08.2013

2929

ՏԵ

ԹԱՎԱՐԱՐ ՀԱՅՈՒԹԻ

ՏԵ

ԽՈՉՈՔՈՒՔ Ժ. թ.

# ՊԵՐԵՎԱԾՈՒՅՈ

## ԽՈՉՈՔ



49646-65

մեր պահանջ առավելութիւնը պայմանականէ  
ո դո՞ւ աշխի նետնի չ թուա զու չ զարդ անց  
աց չի դու աշխառու ու ցմազառուաց զմացմէն  
ո մօ նառարագուայթի և մանուկուն զմացմէն չի  
ենց և սահմանադրական օրենսդրութիւնը Օրենսդրիր, գործադրի և  
դատական իշխանութիւն:

Ամեն մի պետութիւնը, սովորական ժամանակ, երեք տեսակ գործ ունի, որի համապատասխան էլ գոյութիւն ունի երեք տեսակ իշխանութիւն. — օրէնսդրիր, գործադրի և դատական:

Օրէնսդրիր իշխանութիւնը մշակում և հրապարակում է օրէնքներ, որոնց հիման վրայ ապրում և կառավարում է պետութիւնը. Այսաղ են մտնում քաղաքացիական օրէնքները, — սեպականութեան, ժառանգութեան, ամուսնութեան, զննագուն աշխատանքների վարձւելու և ստացւածքը կապալով վերցնելու մասին, և զած իրաւունքները և այլն. Այսաղ են մտնում նաև փարչական օրէնքներն այն մասին, թէ ինչպէս պէտք է կազմով ոստիկանութիւնը պետութեան մէջ և ինչ պէտք է առնի. Այսաղ են մտնում ֆինանսական օրէնքներն այն մասին, թէ պետութեան կարիքների համար ինչ առորքեր են հաւաքւելու. Մրանց թւումն են և քրէական օրէնքները, որոնցով պատիճներ են որոշում զանագուն ոճիրների համար և ուղիշ այլ բաներ:

Ժամանակակից պետութեան կեանքն այնքան բարդ է, որ հարկ է լինում միշտ նոր օրէնքներ հրատարակել. ևս առաւել, որ մի քանի օրէնքներ անպայման վերանորոգւում են ամեն տարի, օրինակ.—յաջորդ տարւայ տուրքի օրէնքները, այլ և այն, թէ ինչպէս պէտք է ծախսեն պետութեան միջոցները (այսինքն, այսպէս ասած, բիւջէն, պետական ելքի և մուտքի հաշուի գրութիւնը՝ որ նոյնպէս օրէնք է):

Բայց օրէնքներ հրատարակելը քիչ է: Պէտք է հսկել, որ հրատարակւած օրէնքները գործադրուեն, որ հաղորդակցութեան ապահովութիւն լինի, որպէսզի առհասարակ մարդկանց վրայ բռնութիւն չդորձագրեի, հարկ է երկաթուղի անցկացնել, դարձոց շինել և հսկել, որ այնտեղ դաստանդութիւն տեղի ունենայ: Պէտք է հրսկել, որ գործարաններում բանւորները չուժապառւեն ուժից վեր աշխատանքով և այլն և այլն: Դրա համար դրամական միջոցներ են հարկաւոր, հետևաբար և պէտք է տուրքեր գանձել, առհասարակ կառավարել երկիրը և, ի հարկէ, այս բոլորը պիտի կատարւի օրէնքի հիման վրայ: Այդ պարտականութիւնն ընկնում է գործադիր իշխանութեան վրայ:

Վերջապէս, ամեն մի պետութեան մէջ յաճախ կատարում են ոճրագործութիւններ, սպանութիւններ, բռնաբարումներ, հրկիզումներ,

պետական ինչքի յափշտակում,—պատերազմի ժամանակ՝ գաւաճանութիւն և այլն: Մինչև այսօր, դժբաղդպաբար, ուարդկութիւնը աւելի լաւ միջոց չի դաել ոճրագործութեան դէմ կուելու համար —առանց պատմելու չի՝ կարողանում կառավարել և ոչ մի ժամանակակից պետութիւն: Դրանից զատ, իւրաքանչիւր պետութեան մէջ մշտական վէճեր են տեղի ունենում այս կամ այն ստացածքի վերաբերեալ իւրաւոնքի մասին՝ զանազան անհատների միջև, ժառանգութեան բաժանման և այլ հարցերի մասին,—առհասարակը գոյութիւն: ունեն այսպէս կոչւած քաղաքացիական վէճերը: Յանցանքների քննութիւնը, պատիժներ որոշելը, ինչպէս նաև քաղաքացիական վէճերին նայելը, ունահարւած իրաւունքի վերականգնումը այս ամենը դատական իշխանութեան գործն է:

Ժամանակակից ազատ և լուսաւոր երկրներում օրէնսդիր իշխանութիւնը գտնուում է պարլամենտի, այսինքն ժողովրդից ընտրւած առանձին ժողովի ձեռքին: Մեծ մասամբ պարլամենտը երկու պալատից է բաղկացած. և, որպէսզի ամեն մի օրինազիծ օրէնք դառնայ՝ պէտք է ամեն մի ողալատում, առանձին-առանձին, ընդունելի ձայների մեծամասնութեամբ: Պալատներից մէկը՝ պատգամաւորների պալատն ընտրւում է ժողովրդի կողմից, այն ինչ միւսում, որ վերին պալատ է կոչւում՝ նոտում են կամ ազնւա-

կամները, կամ թագաւորի կողմից նշանակված  
մարդիկ. հումեմատաբար սակաւ դէպքերում,  
վերին պալատներն էլ ընտրում են ժողովրդի  
կողմից՝ որևէ է յատուկ հիմունքով: Բայց պատ-  
զամաւորների խորհուրդն էլ բարու երկիներում  
ամբողջ ժողովրդի կողմից չի ընտրում, ընտ-  
րողներ են երեքն այնպիսի մարդիկ, որ կամ ան-  
շարժ կայցը անեն, կամ որոշ հարկ են վճարում,  
կամ, յամենայն դէպա, այն բնակարան վարձողները,  
որոնք տարեկան որոշ չափի վարձ են վճարում:

Մի քանի պետութիւնների մէջ, ինչպէս օ-  
րինակ բարքանեան մի քանի մասն պետու-  
թիւններն են ( Բոլգարիա, Սերբիա և Յունաս-  
տան ) պարլամենտը բաղկացած է ընդամենը մի  
պալատից \* ): Ասհասարակ օրէնսդիր իշխանու-  
թիւնը գննազան պետութիւններում տարրեր  
ձեռքով է կազմւած:

Նոյն չափ բազմազան է նաև գործադիր իշ-  
խանութեան կազմակերպութիւնը, որ առհասա-  
րակ, գտնուում է նախարարների և պրանց են-

\* ) Մեզ մօտ, Թուոսատանում, 1906 թւականից և  
յեղափոխութիւնից առաջ 1917 թ, Պետական Դուման  
կազմած էր մի պալատից, բայց նրանից բարձր՝ կանգ-  
նած էր Պետական Խորհուրդը, որ վերին պալատի ան-  
դըն էր բանում: Այսպիսով, եթէ համեմատենք երկու-  
յեղափոխութիւնների միջև մեզնում գոյութիւն ունե-  
ցող կարգերն Արևոտեան Եւրոպացի հետ, կարելի է  
ասել, որ մեր պարլամենտն էլ բաղկացած էր երկու-  
յալատից: Ծան. նեղ.

թակաց պաշտօնեաների ձեռքին: Նոյնպէս զա-  
նազանակերպ է և դատական իշխանութիւնը:

Աւելի ուժեղ է իշխանութիւնների իրենց  
փոխարարերութիւնների մէջ ունեցած իրա-  
ւունքների և պարտականութիւնների զանազա-  
նութիւնը: Մի քանի պետութիւններում, ինչպէս  
օր, Գերմանական կայսրութեան կամ Պրուսա-  
կան թագաւորութեան մէջ,— նախարարներ նշա-  
նակում կամ փոխում է կայսրը կամ թագաւո-  
րը, որի առաջ միայն նրանք պատասխանատու են:  
Նրանք պէտք է պարզամենտի հրատարակած օ-  
րէնքներով կառավարեն, բայց պարլամենտն ի-  
րաւունք չունի նրանց վրայ նակելու, ուստի և  
փաստօրէն, եթէ թագաւորը չվ ընդունակում,  
նրանք յաճախ իրաւունք ունեն պարլամենտի օ-  
րէնքները խախտելու: Ուրիշ պէտութիւնների  
մէջ, օր, Անդիայում, նախարարներին նոյնպէս  
թագաւորն է նշանակում, բայց պարլամենտն ի-  
րաւունք և նախարարութիւն ունի նակելու նրանց  
գործնէութեան վրայ, նրանց նարգապատումներ  
ուղղելու, և եթէ պարլամենտը գտնի, որ նրանք  
կոռավարում են ոչ այնպէս, ինչպէս ինքը կա-  
րիսը է համարում, պահանջել, որ նախարարնե-  
րը հրաժարական տան: Ուստի, թէն նախարար-  
ներին նշանակում է թագաւորը, բայց փաստօ-  
րէն նրանք ամբողջովին կախւուծ են պարլամեն-  
տից և էապէս նրա կողմից էլ նշանակում են.

նախարարներին նշանակելու ժամանակ, թագաւորը պարտաւոր է համակերպել պար լամենտի կամքին։ Այսպէս, պարլամենտին, օրէնսդիր իշխանութիւնից զատ՝ նման երկրներում պատկանում է նաև գործադիր իշխանութեան մեծ մասը։

Բայց աւելի կարևոր է մի ուրիշ տարրերութիւն — պետութիւնների կառավարութեան ձևի առընթերութիւնը։ Մի քանի երկրներում պարլամենտից, նախարարներից, դատարանից վեր է կանգնած արքան, կայսրը, թագաւորը, առասպակ միապետը, որ իշխում է ծննդեան իրաւունքով, «Աստծոյ կամքով», ինչպէս առասպակ առում են միապետները։ Այդ տեսակ պետութիւնները (Աւստրիան, Գերմանական, Կայսրութիւնը, Պրուսիան, Անգլիան և այլն, ինչպէս եւ Ռուսաստանը մինչև վերջին յեղափոխութիւնը) կոչւում են միապետութիւններ։ Ընդհակառակն, ուրիշ պետութիւններում (Ֆրանսիա, Շվեյցարիա, Պորտուգալիա, Հիւսիսային Ամերիկայի միացեալ նահանգները) միապետ չկայ, այլ պետութեան վլուխ է ընտրում, այսպէս կոչող, նախադար, որոշ, ոչ այնքան երկար ժամանակամիջոցով։ Միացեալ նահանգներում 4, իսկ Ֆրանսիայում 2 տարով, և ընտրում է կամ ժողովրդի կամ պարլամենտի կողմից, որն, իր հերթին, ընտրւած է նոյնպէս ժողովրդից։ Այդպիսի պետութիւնները կոչւում են հանրապետութիւն։

Ինչպէս միապետի իշխանութեան ընոյթն ու ամբողջութիւնը, այնպէս էլ գահաժառանգութեան ձեր զանազան միապետութիւնների մէջ իրարից բաւական տարբեր է լինում։ Հանրապետութիւններում նոյնպէս միատեսակութիւն չդիայ. նախագահ ընտրելու ձեր, ժամանակամիջոցը, նրա իրաւունքների և պարտականութիւնների ծառալը իրաւունքների է իրաքանչիւր հանրապետութեան մէջ։

Օրէնքններն, ինչպէս տեսանք, մշակում են պարլամենտները։ Հարց է առաջ գալիս սակայն, ո՞վ է պարլամենտաններին օրէնքներ հրատարակելու իրաւունք տւել, ինչ օրէնք է այդ, որի հիման վրայ ընտրւած է պարլամենտը։ Ո՞ր օրէնքն է որոշել, թէ այս պետութիւնը պէտք է միապետական լինի, իսկ այն ինչը հանրապետական։ Ամեն մի առանձին պետութեան մէջ ո՞ր օրէնքն է իշխանութիւնների այս կամ այն բաժանումը։ Ո՞վ է մշակել այդ օրէնքը։

Այդպիսի օրէնքները կոչւում են՝ սահմանադրութիւն, սահմանադրական կամ հիմնական օրէնքներ։ Հինգ սահմանադրութիւնն էլ, կամ հիմնական օրէնքը — որոշում է իրաքանչիւր պետութեան կառավարութեան ձեր (միապետութիւն կամ հանրապետութիւն), բարձրագոյն իշխանութիւնների կաղմակերպութիւնը, նրանց գոխողարձ սահմանաւորութները, գործնէութեան

միջոցը։ Սահմանադրութիւնների մէջ էլ առհաս-  
արակ որոշում են՝ մարդկային անհատի իրա-  
ւունքները, — բանաւոր և գրաւոր խօսքի ազատու-  
թիւն, հաւատի, միութիւններ կազմելու ազատու-  
թիւն, անձեւնմիտելիութեան, այսինքն առանց  
պատրաճնի վճռի ձերբակալումից ազատ լինելու  
իրաւունքը և այլն։

Հենց առաջին հայեացքից երեսում է, որ  
սահմանադրութիւնը նոյնպէս օրէնք է, բայց ոչ  
հասարակ, նման քրէական, քաղաքացիական և  
սոսիկանական օրէնքներին, ոչ, նա նիմունական  
օրէնք է, որ գծում է պետական կեանքի ճի-  
մունքները, և գրանով իշխում մնացած բոլոր  
օրէնքների վրայ։  
Երբեմն զանազան օրէնքների մէջ հակասու-  
թիւններ են լինում, — չէ որ օրէնքները մշակ-  
ում են զանազան տարբեր ժամանակներում,  
տարբեր կարիքների ազդեցութեան տակ։ և շատ  
յաճախ, նոր օրէնքը մշակելիս՝ օրէնսդիր իշխաւ-  
նութիւնը չի նկատում կամ չի էլ ուղղում նր-  
կատել, որ նա միեւյն ժամանակ փոխում է  
որևէ հին օրէնք։ Այսպիսի գէպըում սովորական  
օրէնքների համար ընդհանուր կանոն է ընդուն-  
ած, — աւելի նորը գերադասում է իրենից առաջ  
եղած օրէնքին։ Ենթադրուում է, որ եթէ օրէնք-  
ների մէջ հակասութիւն կայ, նախին օրէնքը  
գերացւած է աւելի նորով։

Բայց գալսահմանադրութեանը չի վերա-  
բերում։ Այսպիսի մի օրէնսակ վերցնենք։ Շատ սահ-  
մանադրութիւններում մի կէտ կայ, որով բոլոր  
մարդիկ, առանց կրօնի և աղջի խարութեան օ-  
րէնքի առաջ հաւատար են։ Եւ ահա այսպիսի  
մի երկրում, որին սահմանադրութեան մէջ նման  
կէտ կայ, որին պատճառով ուժեղանում է թշ-  
նամութիւնը հրէանեցի նկատմամբ, որ շահասէք  
մարդիկ աւելի ևս բորբոքում են։

Անա պարզամենաը, որտեղ մեծութանու-  
թիւն են կազմում հրէատեացները, մի այս տե-  
սակ օրէնք է հրատարակում։ Հրէաներն ընդ-  
հանուր դպրոցներ չեն ընդունութ, այլ նրանց  
համար ստեղծուում են յատուկ հրէական գրա-  
րացներ, կամ հրէան չի կարող սոլայ լինել։

Ազներէ է, որ նման օրէնքը հակասում է  
սահմանադրութեանը։ Որը պէտք է գերազանի՝  
սովորական օրէնքը՝ թէ սահմանադրութիւնը։

Ի նկատի առնելով այն, որ սահմանադրու-  
թիւնը գերիշխում է մնացած բոլոր օրէնքների վրայ  
— այդպիսի մասնաւոր օրէնքը չպիտի ընդունելի  
համարւի, թէկուզ նա մշակւած լինի սահմանա-  
դրութիւնից շատ տարիներ յետոյ։ Եւ ահա մի  
հրէայ խնդիր է տալիս, որ իր որդուն դպրոց  
ընդունեն։ Դպրոցը՝ յենւելով օրէնքի վրայ՝ նը-  
րան մերժում է։ Այն ժամանակ հրէան դանդառ

է ներկայացնում դատարան, մատնացոյց անելով  
սահմանադրութիւնը, որը օրէնքի առաջ բոլո-  
րին հաւասար է ճանաչում։ Եթէ այդ երկում  
գատարանը կախում չունի ոչ կառավարութիւ-  
նից, ոչ էլ պարլամենտից, եթէ նա լաւ է կադ-  
մած և գործում է խիստ՝ հիմնած սահմանա-  
դրութեան և օրէնքների վրայ, ինչպէս նա և  
պարաւոր է գործել, այն ժամանակ նա կը-  
վճախ։ հրէսմների մուտքն ընդհանուր գալրոց-  
ներն արդելող օրէնքը հակառակ է սահմա-  
նադրութեան, դպրոցի տեսուչը վարել է  
ապօրինի, ուստի և նրան պէտք է պատժել  
յանդիմանելով կամ ծառայութիւնից արձակելով,  
որովհետեւ նա իր իշխանութեան սահմաներից  
դուրս է եկել. կամ դոնէ ստիպել, որ նա  
վճարի հրէայի վասները, որպիսին սա կըել է  
և իր երեխայի ուշ դպրոց մանելուց, կամ զա-  
տարանում գործը վարելու ժամանակ։ Այսպի-  
սով գատարանն ուղղակի օրէնքը չի փոխի,  
այդ իրաւունքը նա չունի, բայց օրէնքն անի-  
րազործելի կդարձնի։ Այդպէս է լինում այն եր-  
կիներում, ուր սահմանադրութիւնը հաստատուն  
և ամուր արմատներ է քցել։ Ուրիշ երկիներում  
յաճախ սահմանադրութիւնը խախտում է, բայց  
այնտեղ էլ այն մարդիկ, որ դժգոհ են որևէ  
խախտումից, միշտ էլ ճնարաւորութիւն ունեն  
յաճախ սահմանադրութեան բողոքելու և, եթէ

այդպիսի բողոքներն առաջ են տարւում եռան-  
գով, քիչ է պատահում, որ առանց հետևանքի  
մնան։

Այսպէս ուրեմն, սահմանադրութիւնը մի  
առանձին կարեսը օրէնք է, նա պէտք է մշակ-  
վի ոչ թէ սովորական օրէնքիր իշխանութիւ-  
նից, այլ մի բոլորովին ուրիշ իշխանութիւնից։  
Այդ իշխանութիւնը կոչւում է սահմանա-  
դիր։

Հետևաբար սահմանադիր իշխանութիւնն  
այն է, որ որոշում է կառավարութեան ձեր  
(միապետութիւն թէ հանրապետութիւն) և պե-  
տական բարձրագոյն իշխանութիւնների կազմա-  
կերպութիւնը (պարլամենտ, նախարարութիւն  
և այլն), ուրիշ խօսքով նա վերամշակում, կամ  
ձեռափոխում է երերի սահմանադրութիւնը։

Սահմանադիր իշխանութիւնը՝ պէտք է գո-  
յութիւն ունենայ ամեն մի պետութեան մէջ,  
որովհետեւ ամեն տեղ երեան են գալիս նոր  
պահանջներ և նախկին սահմանադրական օրէնք-  
ները հնանում ու անպէտքանում են։ Այսպէս,  
օրինակ, ուուներն երեք հարիւր տարի ապրել  
են Ռոմանովների արքայական տան բռնակալ  
իշխանութեան տակ։ Բայց ահա բանից դուրս է  
գալիս, որ Ռոմանովներն այլս յարմար չեն,  
որ Ռուսաստանն իր կառավարութեան ձեր պէտք  
է փոխի և իր համար սահմանադրութիւն մշակի։

Դրա համար էլ հէսց հարկաւոր է սահմանադրությանը իշխանութիւնը:

Հետևաբար, սահմանադրութիւնը, կարծես թէ, օրէնսդրի իշխանութեան մի կարևոր ճիւղն է: Օրէնսդրի իշխանութիւնը մշտապէս է գործում, սահմանադրութիւնը սակաւ է երկան գալիս — մեծ ժամանակամիջոցների ընթացքում: Նա երբեմն չի գործում, տամնեակ տարիներ:

Անզիայում չկայ գրաւոր սահմանադրութիւն, ուսի եւ չկայ յատուկ օրէնսդրի իշխանութիւն:

Արդեօք ում ձեռքին պէտք է գտնելի սահմանադրի իշխանութիւնը:

Այս հարցին տարբեր պետութիւնների մէջ արւում են բոլորսին տարբեր պատասխաններ: Նախ և առաջ ժամանակակից քաղաքակրթութիւնների շբաժանելով այն օրէնսդրի սահմանադրի իշխանութիւն չի ընդունում չբաժանելով այն օրէնսդրականից: — զա Անգլիան է: Եւ նա յատուկ սահմանադրի իշխանութիւնը չի ընդունում, որովհետև ոչ մի խրաբութիւն չի ընդունում, սահմանադրականն և սովորական օրէնքների մէջ: — Անգլիայում իսկի սահմանադրութիւն էլ չկայ, յաճախ առում են Ան-

դիմայի մասին օտարները, և դրա մէջ որոշ ճշմարտութիւն կայ:

Հարցի ամբողջ եռթիւնը նրանումն է, թէ ինչը պէտք է սահմանադրութիւն անհանել: Այս խօսքը գործ է ածւում երեք բոլորովին սարբեր իմաստներով և միշտ պէտք է նրանց զանազանութիւնը հասկանալ:

1. Մինչև հիմա ես խօսում էի սահմանադրութեան մասին, որպէս մի օրէնքի, որը պետութեան մէջ որոշում է կառավարութեան ձեր և իշխանութեան կազմակերպութիւնը, — մի շատ կարևոր օրէնք, որ իշխում է միւսների վրայ: Դա գրաւոր սահմանադրութիւնն է:

2. Բայց դրաւոր սահմանադրութեանը պէտք է համապատասխանի իրական կեանքում գոյութիւն ունեցող մի բան, այսինքն կեանիի կամ իրական սահմանադրութիւնը: Հետևաբար, իրական սահմանադրութիւնն է պետութեան կազմակերպութիւնը, նրա մէջ զանազան ուժերի փոխարքերութիւնը: Իրական սահմանադրութիւնը, ճիշտ, խօսքի գիտական իմաստով՝ գոյութիւն ունի ամեն մի պետութեան մէջ և ոչ մի պետութիւն առանց նրան չի կարող գոյութիւն ունենալ: Նոյն իսկ նախկին Խուսաստանը, ոչ թէ 1905 և 1917 թւականների միջև գոյութիւն ունեցող Խուսաստանը, այլ նոյն իսկ հին, ինքնակալ, բռնապետական Ռուսական կայսրու-

թիւնը, որպիսին ներկայացնում էր նա մինչև 1905 թ., ունէր իր սահմանադրութիւնը, որովհետեւ նրա մէջ կային՝ կայսր, աղնւականութիւն, որ ունէր իր իրաւունքները, կար բիւրոկրատիա՝ իր իրաւունքներով, կային՝ Պետական Խորհուրդ, նախարարներ, նահանգապետներ, գատարաններ, գաղտնի ոստիկանութիւն, ոստիկանական դեպարտամենտ և այլն \*):

3. Բայց իրական սահմանադրութիւն է ոչ ամեն պետութեան կազմակերպութիւնը, այլ այդպէս է անւանւած մի քանի առանձին պետութիւնների կազմակերպութիւնը, որոնք կոչւում են սահմանադրական՝ զանազաններու համար անսահման կամ ինքնակալ իշխանութիւն ունեցող պետութիւններից։ Սահմանադրական պետութիւններում (խօսքի այս վերջին իմաստով) ճանչւում են մարդկային անհատի անբըռնաբարելի իրաւունքները, իշխանութիւնները (օրէնսդիր, գործադիր և գատական) աւել կամ պակաս ճշուութեամբ բաժանւած են իրարից և ամբողջ պետական մեքենան կարգաւորւած է այնպէս, որ նա շարժւում է զանազան անիւնե-

\*) Սահմանադրութեան հասկացողութեան մասին խօսքի այս իմաստով՝ շատ հիանալի բացատրութիւն է տեսլ Ֆերդինանդ Լասալը «Սահմանադրութեան էութիւնը» կոչւող իր նշանառը ճառում արտասանած 1862 թ. տպած է հայերէն, «Յառաջ» ի հրատարակութիւն։



րի հաւասար ուժով, և այդ Անդրեաս Մաշնիեկը չի գերիշտում միւսի վրա Պատուակապէս վերջապէս այդ ամբողջ մեքենան դործում է օրէնքների հիման վրայ և ներշնչւած է խիստ օրինականութեամբ։

Եյս ամենը Անդրեայում կայ, և գուցէ աւելի բարձր աստիճանով, քան թէ ուրիշ տեղ՝ Սրանից զատ այդ ամենը Անդրեայում աւելի հին է, քան որևէ այլ վայրում։ Անդրեայում սահմանադրութիւնը (այս խօսքի վերջին իմաստով) եօթը դար կեանք ունի։ Անդրեայում թագաւոր կայ, բայց այդ թագաւորի իշխանութիւնը շատ չնշին է։ Նա ոչ միայն ինքնազլուի կերպով օրէնքներ չի հրատարակում, այլ նոյնիսկ իրաւունք չունի պարլամենտի շահագութեամբ անցած օրէնքի հաստատելը մերժել։ Նա նշանակում է հեռացնում է նախարարներ, որոնք սակայն պատասխանատու են միայն պարլամենտի առաջ, և թագաւորը պարտական է նախարար նշանակել միայն նրանց, որոնց մատնացոյց է անում պարլամենտը։ Եյսպիսով թագաւորի իշխանութիւնը շատ և շատ սահմանափակ է և աւելի շատ Անդրեայի պետական շնչքի համար մի պաճուճանք, մի դարդ է, քան թէ իրական իշխանութիւն։ Պարլամենտն օրէնքներ է հրատարակում, բայց հրատարակելով ինքն ևս օրէնքի հիման վրայ է գործում, և

մինչեւ որ նորը չհրատարակվի նա աչ իրաւունք, ոչ էլ հնարաւորութիւն ունի խախտելու հինր:

Սյս հանգամանքը առանձնապէս ցայտում կերպով բնորոշւում է հետեւեալ միջնադէպով։ Անդիական համայնքների պալատը (Անգլիական պարլամենտի ստորին պալատը) մի շատ հին օրէնքի հի ան վրայ իրաւունք ունի իրեն հասցրած վիրաւորանքի համար յանցաւորներին հանգիմանել և նոյնիսկ կարճ ժամանակով նրանց ձերբակալել, բայց այդ ձերբակալումը ոչ մի պարագայում չի կարող պալատի նստաշընք ժամանակից աւելի տեսլ։ Նստաշընքը վերջանալու պէս, պալատի հրամանով ձերբակալած անձնաւորութիւնը պէտք է ազատ թողվ լի։ Պալատի համանօրինակ կարգադրութիւնները գործադրելու համար զոյութիւն ունեն յատուկ պաշտօնեաներ։ Մի անգամ, 1893 թւին համայնքների պալատը հրամայեց քննել Անլիական բանտերի գործերը և այդ առթիւ եղած հաշւետութիւնը յանձնարարեց տպագրել իր տպարանական պաշտօնեայ Հանսարդին։ Ստորդել անունով մի բանգապէտ հաշւետութեան մէջ հաղորդած մի քանի փաստերն լի համար վիրաւորական համարեց և վճռեց գանդատ տալ։ Եւ որովհետեւ համայնքների պալատի վրայ, որպէս օրէնդրական բարձր հիմնարկութիւն, գանգատ տալու տեղ չկայ, ուստի նա դատի կանչեց տպարա-

նտկան պաշտօնեային՝ մեղադրելով նրան զրբութարութեան մէջ։ Հանսարդը գտնելով, որ համայնքների պալատն իրաւունք ունէր բանտերի գործերը քննութեան ենթարկել, և որ, հետեւապէս, ոչ պալատը, ոչ էլ ինքը որևէ իրաւութիւնը չեն արել, հրաժարուեց դատարան ներկայանալ երդւեալ դատաւորները՝ որա բայց կայութեան ժամանակ նրան յանցաւոր ճանաչեցին և դատապարտեցին 600 ոսկի տուգանքի յօւզուտ Ստորդելի, իսկ դատաստանական պաշտօնեաները գանձեցին Հանսարդից այդ գումարը։

Դատավճռոը կայացել էր այն ժամանակ, երբ պարլամենտ ու նիստեր չու էր։ Բայց հէնց որ պարլամենտական նստաշընքը բացւեց, համայնքների պալատը քննութեան ենթարկեց Հանսարդի և Ստորդելի գործը և որոշեց, որ դատարանն իրաւունք չունէր Ստորդելի գանձուածն ընդունել, որ այս պատճառով էլ որա պատճառով ապօրի ի է, ուրեմն և այն պաշտօնեան, որ Հանսարդից տուգանք էր զանձել յանցաւոր է որպէս պալատի իրաւունքների գէմ ոտնձգութիւն անող։ Ուստի և պալատը հրամայեց իր պաշտօնեաներին՝ ձերբակալել ինչպէս Ստորդելին, այն պէս էլ Հանսարդից ուուզանք գանձող դատաստանական պաշտօնեային, այլ և այն փաստաբանին, որ դատարանում պաշտօնել էր Ստորդելի գործը։

Այսպիսով ընդհարում առաջացաւ երկրի երկու հիմնարկութիւնների միջև որոնք ունեին իրաւունքների և պարտականութիւնների իրարից անջատ շրջաններ։ Գործը վերջացաւ նրանով, որ պալատն ընդունեց թէ ինքնք էլ այնքան իրաւացի չէ եղել, և Ստորդեմի ու դատաստանական պաշտօնեայի մասին արած իր միահեծան կարգադրութիւնը շտապեց վերացնել մի ընդհանուր օրէնքով, որի համաձայն պարլամենտի այս կամ այն պալատի տպել տւած բոլոր հաշւետութիւնները, գրքերը և յայտարարութիւնները չեն կարող հալածանքի ենթարկել։ Կորդերի պալատը նոյնպէս ընդունեց այս օրէնքը, և թագաւորը պարտաւորւեց հաստատել։

Հենց որ այդ կարգադրութիւնը օրէնք դարձաւ, դատարանն ընդունեց և գործը դադարեցրեց։ Դրա հետ մէկտեղ, առանց սպասելու նստաշրջանի փախճանին, պալատը բանտից ազատեց Ստորդելին, նրա փաստաբանին և դատաստանական պաշտօնեային։

Այս գործում մեղ համար առանձնապէս կարեւոր են հետեւալ կէտերը։

Առաջին. Անդիմայում ոչ ոք իրաւունք չունի արդարանալ նրանով, թէ ինքն իշխանութեան վճիռն է կատարել։ Ամեն ոք իր համար է պատասխանառու, և իւրաքանչիւր ոք, նոյն-

ինկ ստորագրեալը, պարաւաւոր է մտածել իր տրածի մասին։ Եթէ իշխանութիւնն ապօրինի հրաման է տալիս, ոչ ոք իրաւունք չունի գործադրել, այլապէս ինքը կպատժէ։

Երկրորդ. իւրաքանչիւր իշխանութիւնն գործում է միայն օրէնքի սահմաններում։ Եւ ինքը, օրէնսդիր իշխանութիւնն էլ բացառութիւն չի կազմում։

Երրորդ. բոլոր իշխանութիւններն իրար սահմանափակում են և իրար ստուգում, ինչպէս անկաները՝ ժամացոյցի մեխանիզմում։ Երեմն լինում են թիւրիմացութիւններ, ընդհարութիւններ, միջնադէպեր։ Դրանց ելքը նոր օրէնք հրատարակեն է։ Բայց օրէնքը պէտք է օրինական կարգով հրատարակի։ Մի պալատի որոշումը գեռ օրէնք չէ։ Նոյնիսկ երկու պալատի սրոշումը, առանց թագաւորի ստորագրութեան, օրէնք չի համարւում, թէպէտ և թագաւորի ստորագրութիւնը մի ձեական բան է, որից նա հրաժարւելու իրաւունք չունի։ Բայց հէնց որ մի որեւէ վճիռ ընդունում է պարլամենտի երկու պալատների կողմից և վաւերանում թագաւորի ստորագրութեամբ, արդէն օրէնք է դառնում և պարտադիր է դատարանի ու մասնաւոր բաղաքացիների համար։ Հանսարդի և Ստորդելի գործից 2 տարի յետոյ պալատը մի այսպիսի բանաձև ընդունեց։

«Ռէնքը բարձր է ստորին պալատից և թագաւորից: Թէև այդ երկուսն էլ պատասխանատվութիւնից ազատ են, բայց եթէ նրանք օրէնքը ունահարեն, պատասխանատվութեան է ենթարկում այն մասնաւոր կամ պաշտօնական անձը, որը նրանց ազօրինի պահանջը գործադրել է»:

Պէտք է նկատել, որ համայնքների պարտի իրեն վիրաց որանք հասցնելու համար ձերբակալութիւններ կատարելու այդ մի քիչ տարօրինակ արտօնութիւնը թաղւած է խոր հառթեան մէջ: Մի ժամանակ դատարանը կախում ունէր թագաւորից, և պալատն աշխատելով նման արտօնութիւն իր համար ձեռք քցել՝ փաստորէն պաշտպանում էր իր և միենոյն ժամանակ ժողովրդի իրաւոնքները թագաւորի կողմից լինելիք հեարաւոր ոտնձգումներից: Ներկայումս Անգլիայում, ինչպէս ցոյց է տալիս թէկուզ վերովիշեալ դէպքը, դատարաններն պյլսս թագաւորի կամայականութեան գործիք չեն, այլ սահմանադրական ազատութեան յենարանն են հանդիսանում, և այդ տարօրինակ արտօնութիւնը կորցրել է իր նշանակութիւնը: Ստոկգոլմի և Հանսարդի գործից յետոյ պալատի անմիջական կարգադրութեամբ ձերբակալման ոչ մի դէպք տեղի չի ունեցել: Զետեսանօրէն պալատի ձերբակալութիւններ կատարելու իրաւուն-

քը չի վերացւած, բայց Անգլիայում՝ ոչ ոք չկասկածում, որ նա այլևս ոչ մի արժէք չունի: Այսպէս, ուրեմն, Անգլիայում կան այն բոլոր նշանները, որոնց հիման վրայ պետութիւնները համարւում են սահմանադրական այս բառի ամենանեղ իմաստով. օրինականութեան գերիշխանութիւն, մարդկային անհատի լայն իրաւունքներ, իրար ստհմանափակող իշխանութիւնների բաժանում: Եւ այսուամենայնիւ, որքան էլ այդ տարօրինակ թւայ, Անգլիայում գրաւոր սահմանադրութիւն չկայ: Անգլիայում չկայ մի օրէնք, որ համարւէր աւելի կարեոր և աւելի պարտադիր, քան միւսները:

Ստիւարտների հարատութեան վերջնի թագաւոր Յակովը II, որ իշխում էր 17-րդ դարու վերջերին, չկամեցաւ հաշուի առնել այն ժամանակ արդէն հզօր պարլամենտի կամքը: Նրա վարժունքն առաջ բերեց համատարած զայրոյթե Անգլիական պարլամենտի քաղաքական կուսակցութիւնների դեկավարները 1688 թւին Անգլիա հրաւիրեցին Յակովի աղջկայ ամուսնուն՝ Նիդերլանդացիների պետ Վիլհելմ III Օրանցին. Վիլհելմ III Օրանցին Անգլիա մտաւ. Յակովը II փորձեց զօրքը օգնութեան կանչել. Յակովը II փորձեց զօրքը օգնութեան կանչել. Պարագայ անգլի ունեցաւ նոյնը, ինչ որ մօտիկ անգայց անգլի ունեցաւ նոյնը, ինչ որ մօտիկ անգայց պատահեց Ռուսաստանում. ոչ մի սպայ, ոչ մի դիմուոր չօգնեց նրան: Այն ժամանակ

Յակորն շտապով փախաւ արտասահման։ Վիլ-  
հելմ III Օրանցին Լոնդոն մտաւ և անմիջապէս  
պարլամենտ գումարեց։

Պարլամենտն իսկոյն և եթ ընդունեց մի  
օրէնք, որ յայտնի է Իրաւունքների Բիլ անու-  
նով։ Այնտեղ ասւած է։

«Որովհետեւ վերջին Յակովը II թագաւորը  
զանազան չարամիտ խորհրդատուների, գատա-  
ւորների և իր մօտ ծառայող պաշտօնեաների  
աջակցութեամբ փորձեց տապալել և արմատա-  
խիլ անել բողոքական հաւատը, օրէնքներն ու  
այս թագաւորութեան ազատութիւնները...»

«Այդպիսի գործողութիւններն անպայման  
եւ ուղղակի հակառակ են հանրածանօթ օրէնք-  
ներին և այս թագաւորութեան ազատութեանը։

«Եւ որովհետեւ ի նկատի ունենալով Յակովը  
Ա-ի հրաժարականը և զրա հետևանքով գաճի  
թափուր մնալը՝ նորին մեծութիւն Օրանի իշ-  
խանը (որին Ամենազօր Աստած համելի համար-  
եց արժանափառ զէնք դարձնել ազատելու հա-  
մար այս թագաւորութիւնը բռնակալութիւնից  
և կտմայական իշխանութիւնից) լորդերի և հա-  
մայնքների մի քանի նշանաւոր անձնաւորու-  
թիւնների խորհրդով հրամայեց զրել հրահանդ-  
ներ... պարլամենտական ընտրութիւնների հա-  
մար... և որովհետեւ այդ հրահանգների հիման

վրայ համապատասխան կերպով ընտրութիւններ  
կատարուեցին,

Սրանով լորդերը և համայնքները յայտը-  
րում են հետեւեալը...\*)

1. Որ թագաւորի հրամանով, առանց պար-  
լամենտի համաձայութեան օրէնքներ և օրէնք-  
ների կատարումը դադարեցնադ իշխանութիւնն  
ազօրինի է...

3. Արտակարգ գատարաններ հաստատելի  
ազօրինի է և կործարանար։

4. Որ թագաւորի օգտին և նրան արամա-  
զընուու համար առանց պարլամենտի համաձայ-  
նութեան տուրքեր գանձելը... ազօրինի է։

5. Որ այլայլ միջնորդութիւններով թա-  
գաւորին զիմելը հպատակների իրաւունքն է, և  
այդ աեսակ միջնորդութիւններն արգելելը կամ  
հալածանքի ենթարկեն ազօրինի է։

6. Որ թագաւորութեան սահմաններում ա-  
ռանց պարլամենտի թոյլատութեան զօրք հա-  
ւաքելին ու նրանց պահելը հակառակ է օրէնքին։

8. Որ պարլամենտի անդամների ընտրու-  
թիւնները պէտք է լինեն ազատ։

\*) Այսինքն լորդերի պալատը (Անգլիական պար-  
լամենտի վերին պալատ) և համայնքների պալատը  
(հետեւ պալատ)

9. Ար պարլամենտում խօսքի աղաջոռաթիւնը  
շպէտք է ճնշվի:

Լորդերն էլ, համայնքներն էլ խնդրում,  
պահանջում և պնդում են այս բոլոր կէտերը և  
նրանցից իրաքանչիւրն առանձին-առանձին, որ-  
պէս իրենց անկատեկի իրաւունքներն ու ազա-  
տութիւնները...

Յիշեալ լորդերն ու համայնքները որոշում  
են, որ Վիլհելմն ու Մարիամն,—Օրանցի իշխանն  
ու իշխանունին—ճանաչում և հոչակտում են  
որպէս Անգլիայի թագաւոր և թագուհի...

Թէ լորդերը, և թէ համայնքները խնդրում  
են յիշեալ իշխանին և իշխանունուն համաձայն  
վերևում ասածների՝ ընդունել զանը:

Վիլհելմ III ստորագրեց իրաւունքների  
բիլլը, որն այսպիսով դարձաւ օրէնք:

Պէտք է նկատել, որ զրա մէջ կայ մի ան-  
կանկած և զիտակցութեամբ կատարւած անձը-  
տութիւն: Յակովը թագաւորը երբէք գահից չէր  
հրաժարել, այլ միայն փախել էր Անգլիայից:  
Բայց լորդերն ու համայնքներն ընդունեցին կամ  
ձեացրին, թէ ընդունում են այդ փաստը, որ-  
պէս լոելեայն գահից հրաժարում:

Վիլհելմ III-ը, զաւակ չունել, ուստի և եր-  
կիւղ կար, թէ զանը կմնայ փախած Յակովը II-ի  
որդուն: Այս վտանդից ազատւելու համար՝ 1701

թւականին պարլամենտը դահաժառանգութեան  
մասին մի օրէնք անցկացրեց, որով Յակովը II-ի  
սերունդը զրկվում էր իրաւունքներից և գահը  
կարող էր, անցնել իգական շառավիղով, փախած  
Յակովը II շատ հեռաւոր ազգականներին:

Այս երկու օրէնքը իրաւունքների բիլլը և  
գահաժառանգութեան օրէնքը, և առանձապէս  
վերջինը, պատկանում են այն ամենակարևոր  
օրէնքների թվին, որ երբեքցէ Անգլիայում հրա-  
տարակւել են:

Եւ իսկապէս:

Անգլիայն գանն է հրաւիրւել նոր մարդ և  
զբանական միասին նոր հարստութիւն:

Այն ժամանակայ պարլամենտական որո-  
շումների ծանրաբարբառ և կոպիտ, բայց կըտ-  
րուկ ու անողոք լեզով վճռւած է, որ այդ մար-  
դը պէտք է երկիրը կառափարի օրէնքների և  
կարգի հիմունքներով, որոնք պարլամենտի հա-  
ւանութիւնն են զտել որ թէն նա ամենազօր  
Առուծուծոյ գործիքն է, բայց այնուամենայնիւ-  
պարաւաոր է համաձայն պարլամենտի ցուց-  
մունքների գործել, Առանց պարլամենտի թուլ-  
աւութեան նա իրաւունք չունի—ոչ գուստարան  
հիմնել, ոչ զօրք պահել և ոչ էլ հարկ հաւաքել:  
Քոլորովինն պարզ է, որ այդ օրէնքներից առա-  
ջինն ամուս կերպով սահմանադրակոն կազմն է  
հաստատում, իսկ երկրորդը՝ դահաժառանգու-

թեան կարգը։ Յետադայ երկու հարիւրամեաւ կում մշակւեցին մի քանի այլ օրէնքներ, որոնք պակաս կարևոր պետական նշանակութիւն չունեին, քան այդ երկուսը. այդ օրէնքներով որոշում են երկու պալատների իրաւունքներն ու փոխյարաբերութիւնները, համայնքների պալատի ընտրութիւնների կարգը և ուրիշ նոյնչափ կարևոր բաներ։

Այս բոլորն ի նկատի ունենալով՝ ինչ իմաստ ունի տարածւած զարձւածքը, թէ Անդիայում ամենեին սահմանադրութիւն չկայ։

Ահա թէ ինչ իմաստ։

Անդիայում գրւած սահմանադրութիւն չկայ, այսինքն չկայ մի օրէնք, որ համարւէր ամենից աւելի կարևոր և պարտադիր, չկայ մի օրէնք, որ ուրիշ օրէնքներին հակասելիս գերազան համարւէր և նրան առաջնութիւն տային։ Վերջերս Անդիայում մի օրէնք անցաւ, որի համաձայն ճանապարհներին աւտոմոբիլներն ունենալու են լավտերներ առջեից և յետեից։—Այս և սրա նման բոլոր երկրորդական և երրորդական օրէնքներն անդիացիների համար նոյնքան պարտադիր նշանակութիւն ունեն, որքան Վիլհելմ Օրանցուն Անդիա հրաւիրելը, գահաժառանգութեան, լորդերի պալատների իրաւունքների և այլ նման օրէնքներ։

Պարլամենտը միենոյն կարգով կարող է

փոխել, կամ բոլորովին վերացնել 1689 թւի իրաւունքների բիլը, գահաժառանգութեան օրէնքը, ինչպէս և կառապանների սակագնի կամ աւտոմոբիլների լավտերների մասին եղած օրէնքները։ Եթէ երկու պալատները ձայների պարզ մեծամասնութեամբ ընդունեն մի օրէնք, որ թագաւորական իշխանութիւնը վերացւում է Անդիայում և հասարակապետութիւն է հրատարակւում, թագաւորը չի կարող հրաժարւել ստորագրելուց և օրէնքն ոյժ կստանայ։ Հաւանական է, որ այդ բանն աւելի ուշ կատարւի, քան աշխարհի ուրիշ որեւէ վայրում։ Թրանսիացիք շատ անգամ են տապալել իրենց թագաւորներին և կայսրներին և վերջապէս, հասարակապետութիւն են հաստատել։ Մենք՝ ոռոսաստանցիներս երեք հարիւր տարւայ կեանք ունեցող բռնապետութեան հետ տապալեցինք մեր Նիկոլայ Ա-ին։ Շատ հաւանական է, որ շուտով մեր օրինակին հետևեն գերմանացիք, աւստրիացիք, բուլգարները և գուցէ ուրիշ ազգեր։ Բայց Անդիայում թագաւորական իշխանութիւնը շատ թոյլ է, անդիական պետական շէնքի մի զարդ, ինչպէս տան ճակատին մի նկար, և մեծ յարգանք է վայելում ամբողջ երկրում։ Վիլհելմ Ա-ից (1688 թ.) և առաւել ևս Վիկտորիա թագուհուց (1837—1901) սկսած՝ թագաւորը պետութեան բարձրաստիճան պաշտօնեան է հա-

մարտում, որն աւելի շուտ պատւաւոր, քան թէ իրական և ազգեցիկ տեղ է գրաւում։ Այս հանգամանքն աչքի առաջ ունենալով վստահութեամբ կարելի է ասել, որ միապետութեան անկումն Անդիայում շատ հեռաւոր ապագայի հարց է։

Բայց եթէ Անդիական գաճը բարձրանայ Նիկոլայ Ա-ի ծդտումներով մէկը, այդ դէպքում անկասկած անգլիացիք կէտենեն մեր օրինակին, բայց այդ նրանք կանեն առանց արիւնհեղութեան, աւելի պարզ և ճիշտ եղանակով։ — պարզամենտի երկու պալատները կ'որոշեն նրա գահնկցութիւնը, և, եթէ նա դիմադրութեան փորձ անի, ոչ մի զէնք և ոչ զիււոր չի պը անուի, որ նրան աջակցի։

Այն պաշտօնեամ, ոստիկանը, սպան, որ յանդինի այդ բանն անել, կհամարւի պետական դաւաճան, դատի կյանձնուի և կալատժւի։ Սակայն այդ տեսակ մարդ չի գտնուի։

Այսպիսով, Անդիան, չունենալով յատուկ ասհմանադրութիւն, որպէս մի բացառապէս կարևոր օրէնք՝ չի ճանաչում սահմանադիր իշխանութիւն։ Սահմանադիր իշխանութիւնը ամբողջապէս միա ում է օրէնսդրական իշխանութեան հետ։ Այդ տեսակտից Անդիան աշխարհի համարեա միակ պետութիւնն է։

### III

Սահմանադիր իշխանութիւն կազմակերպելու գանազն ձևերը։

Մնացած պետութիւնների սահմանադիր իշխանութիւնն աւելի կամ պակաս չափով առանձնացած է օրէնսդրական իշխանութիւնից, բայց ուսումնական պետութիւնների մէջ բոլորովին տարբեր ձևերով։

Կարելի է ցոյց տալ սահմանադիր իշխանութիւն կազմակերպելու երեք տարբեր միջրց։

1. Սահմանադիր իշխանութիւնը պատկանում է միենոյն պարլամենտին, որին պատկանում է օրէնսդիր իշխանութիւնը, բայց այդ իրաւունքից պարլամենտը պէտք է օգտւի բոլորովին այլ կերպով։

2. Սահմանադիր իշխանութիւնը բաժանում է պարլամենտի և անմիջապէս ժողովրդի միջև։

3. Սահմանադիր իշխանութիւնը յանձնուում է առանձին սահմանադիր ժողովի, որ յատկապէս, կամ զիսաւորապէս, սահմանադրութեան վերաբնութեան համար է ընտրած։ Սահմանադիր ժողովները տարբեր երկրներում իրենց յատուկ անուններն ունեն։ — Ամերիկայում կոչւում են Պոնտենտ, Բոլգարիայում ժողովրդական Մեծ

Ժողով, Սերբիայում Մեծ Սկուպչինա, Ներկայումս միայն Շևէյցարիայի կանտոններն են բաւականանում «սահմանադիր ժողով» պարզ անունվ, բացի այդ անցեալ դարու պատմութեան մէջ (օր. Ֆրանսիայում 1789 թ. և 1848 թ.) եղել են մի քանի ժողովներ, որ «սահմանադիր» ից բացի ուրիշ անուն չեն կրել: Բայց հարցն, ի հարկէ, անսան մէջ չէ: Պարլամենտներն էլ տարբեր երկրներում տարբեր անուններ են կրում.— Ֆրանսիայում պարլամենտը կոչւում է ազգային ժողով, Գերմանիայում՝ ուշխսատգ, Հիւսիսային Ամեր. Միաց. նահանգներում՝ կոնգրէս, Նորւեգիայում՝ ստորտինգ, Շևէյցարիայում՝ սփիզադագ, Ռուսաստանում՝ դումա և այլն: Այսուամենայնիւ դրանք բոլորն էլ պարլամենտ են:

## IV

Ի՞նչպէս են պարլամենտները վերաբենում սահմանադրութիւնը:

Ֆրանսիայի ներկայ սահմանադրութիւնը 1875 թւին մշակել է մի յատուկ սահմանադիր ժողով, որը կոչւում էր ազգային ժողով, ինչպէս հիմայ կոչւում է պարլամենտը: Բայց նա, իրօք, սահմանադիր ժողով էր: Նրա մշակած սահմանադրութեան մէջ կայ մի առանձին յօդած, որտեղ նախատեմնուում է, թէ այսու-

հետև ինչպէս պէտք է վերաքննել և փոփոխութեան ենթարկել սահմանադրութիւնը:

Օրէնսդիր իշխանութիւնը ֆրանսիայում պատկանում է պարլամենտին, որ բաղկացած է երկու պալատից. դրանցից վերինը՝ սենատն ընտրում են գեմակի ժողովները, քաղաքային ինքնավարութիւնները և ժողովրդական յատուկ ընտրողները: Ստորին պալատը, կամ պատգամաւորների պալատը ընտրում է ընդհանուր, ուղղակի, հաւասար և գաղտնի ձայնատութեամբ: Ամեն մի օրէնք պէտք է ընդունվի երկու պալատումն էլ, որից յետոյ հանրապետութեան նախագահն ստորագրում և հրատարակում է, առանց իրաւունք ու ենալու շվաւերացնելու այն: Իսկ սահմանադրութիւնը վերաքնննում է այլ կերպ: Երկու պալատներում պարլամենտը պէտք է որոշի, թէ հարկաւոր է վերաքննել սահմանադրութիւնը: Հենց որ այդ որոշւեց՝ պարլամենտի երկու պալատները հաւաքւում են միասին, լրիւ կազմով, նիշպէս մի պալատ և փոփոխութեան ենթարկում սահմանադրութիւնը: Պարլամենտի այդպիսի միացեալ ժողովը կոչւում է ազգային ժողով: 1875 թւից այդ ձեռվ սահմանադրութեան մէջ մի քանի ուղղումներ են մտել սենատորներ, պատգամաւորներ ընտրելու մասին և այլն:

Այսպիսով սահմանադրութիւնը վերաքննելու նախաձեռնութիւնը պատկանում է պարլամեն-

տին՝ երկու պալատների առանձին նիստերում, իսկ վերաքննութիւնը՝ ազգային ժողովն, այս ինքն պալատների միացեալ նիստին:

Վերաքննութեան հիմքարկած սահմանադրութեան համար ոչ մի՛ հաստատում, վաւերացում չի՛ սպահանջուռ, ենց որ ընդունելու ազգային ժողովում ձայների մեծամասնութեամբ՝ նախագահը պարտաւոր է հրապարակել նոր սահմանադրութիւնը:

Խնչակի տեսնում ենք, սահմանադիր և օրէսադիր իշխանութիւնների տարրերութիւնն արտայայտում է որոշ հանդիսաւորութեամբ, սահմանադրութիւն վերամշակելիք մի փոքր աւելի դժւարութիւններով, քան այդ վնասմ է, սովորական օրէնքների համար: Կայ և մի փոքրիկ տարրերութիւն, սենատն ունի 300 անդամ, սուրբն պալատը՝ 597: Երբ նրանք առանձին-առանձին են նիստ ունենում, սենատն ու պատգամաւորների պալատն իրոնաւասար են: Միացեալ նիստում, պարզ է, որ պատգամաւորները դերակըսում են:

Աշխային ժողովի, այսինքն պազրումնախի երկու պալատի միացեալ ժողովի վրայ, սահմանադրութեան վերաքննութիւնից զատ՝ մրանսիայում, մի պարտականութիւն էլ է դրւում, — նա է ընտրում հանդապետութեան նախագահին, եթէ նախկինի լիազօրութեան եօթնամեայ ժամանա-

կամիջոցն անցել է, (կամ եթէ մեռել է ժամանակամիջոցից առաջ): Բայց սահմանադրութեան վերաքննութիւնն ու նախագահի ընտրութիւնը չեն կարող կատարւել միևնույն ժողովում, ամեն մէկի համար պահանջւում է առանձին գումարում:

Մի քանի պետութիւններում սահմանադրութեան վերաքննութիւնը պարզամենտը կատարում է սովորական օրէնսդրական եղանակով, միայն մի քանի առանձնայատկութիւններով:

Գերմանիայում ուսիստագը (պարլամենտը) սահմանադրութիւնը վերաքննելու նախաձեռնութեան իրաւունքն ունի և սովորական եղանակով: Ճայների պարզ մեծամասնութեամբ հարցը կարող է գնուի: Բայց որպէսզի դա օրէնքի ոյժ ստանայ, հարկաւոր է դեռ ևս զերմանական կայսրութեան կազմի մէջ մտնող զանազան մանրը պետութիւնների կառավարութիւնների խորհրդի հաստատութիւնը: Այդ խորհրդում Պրուսիան ունի՛ 17 ճայն, Բաւարիան՝ 6, միւս պետութիւնները՝ 4, 3, 2 և վերջապէս, 17 ամենամանը պետութիւնները 1-ական ճայն, ընդամենը 61 ճայն: Սովորական օրէնքը կեանքում դործադրում է միայն այն ժամանակ, եթէ նըրան հաւանութիւն է տալիս դաշնակցների խորհրդի մեծամասնութիւնը: Իսկ որպէսզի սահմանադրութեան մէջ արւած որիէ ուղղում

ոյժ ստանայ, հարկաւոր է դաշնակիցների խորհրդի առնւազն  $\frac{3}{4}$ -ի համաձայնութիւնը: Այսպէս, ոչյլստագը, այսինքն պատգամաւորների պալատը՝ սահմանադրական հարցերի վերաբերեալ օրէնքներ է հրատարակում ճիշտ այնպէս, ինչպէս միւս սովորակտն հարցերի վերաբերեալ, բայց նրա ընդունած սահմանադրութեան փոփոխութեան վերաբերեալ որևէ որոշում ոյժ կարող է ստանալ՝ գերմանական կայսրութեան մէջ մտնող բոլոր պետութիւնների համարեա թէ միաձայն հաւաձայնութեամբ:

Պրուսական թագաւորը, կամ փոքրիկ պետութիւնների 16 ամենաչնչն միապետները բաւական են, որպէսզի կանգ առնի սահմանադրութեան որևէ փոփոխութիւնը, թէկուզ այդ բանն ստիպողաբար պահանջի ժողովուրդը:

Այս վերաբերմունքը դէպի սահմանադրութեան փոփոխութիւնը գերմանական կայսրութեան ծագումի մէջ է թագնւած: Կայսրութիւնը առաջ է եկել 1867 և 1871 թ. այն ժամանակ ինքնուրոյն՝ երկու և կէս տասնեակ այլ և այլ գերմանական պետութիւններից, որոնք որոշ համաձայնութեան հիման վրա՝ միացան և կազմեցին մի դաշնակից պետութիւն: Նոր ստեղծւած պետութեան սահմանադրութիւնը մշակելու համար գումարեց սահմանադրի ժողով (սահմանադրի ոչյլստագ), բայց առանձին պետութիւնների մունքների վրայ գրեցին իրենց որոշ ազգեցութիւնը: Այսպէս մշակած սահմանադրութիւնը մշակելու համար գումարեց սահմանադրի իշխանութիւնը որէնադրականից տարբերում է միմիայն երկրորդական մանրամասնութեամբ:

Թիւնների կառավարութիւնները նրա պարապմունքների վրայ գրեցին իրենց որոշ ազգեցութիւնը: Իրենց մշակած սահմանադրութեան վրա նրանք նայում էին իրեն մի տեսակ հաւատի վրա հիմնած գամ բաժնեաիրական ընկերութեան կանոնադրութեան վրա: Մանելով դաշնակցութեան մէջ՝ նրանք հրաժարում էին յօգուտ կայսրի իրենց իրաւունքների մի մասից, բայց չէին ցանկանում նրանց յետագայ կրծատումը, ուստի և սահմանադրութեան ամեն փոփոխութեան համար նրանք ստեղծեցին ճնշիչ պայմաններ, բայց ճնշիչ միայն մի կողմով, — սահմանադրական վերաբնութեան խոշնորու հանդիսանալու հապալաւորութիւնը նրանք իրենց ձեռքում պահեցին, իսկ ժողովրդին, յանձին իր ներկայացուցիչների, այս տեսակէտից ազատութիւն տվին:

Գերմանական ամենադլխաւոր պետութիւնների մէջ, օրինակ Պրուսիայում, սահմանադրութիւնը վերաբննելու համար պահանջւում է, որ միենոյն ուղղումը երկու անդամ ընդունելի երեք շարթից ոչ պակաս ժամանակամիջոցում, — և միայն այդքան: Սա միակ տարբերութիւնն է նոր օրէնք և նոր սահմանադրութիւն մշակելու մէջ: Հետևաբար սահմանադրի իշխանութիւնն օրէնադրականից տարբերում է միմիայն երկրորդական մանրամասնութեամբ:

Աւստրիայում սահմանադրութեան վերաբնորւթիւնը կատարւում է օրէնսդրական սովորական եղանակով, միայն երկու տարրերութեամբ. սահմանադրութիւնը քննութեան ենթարկելիս պահաջեռում է, որ իւրաքանչիւր պայմանում ներկայ լինի առնւազն անդամների կէպը, իսկ միւսը պէտք է բնդունու ձայների՝ գոնէ<sup>2/3</sup> մեծամասնութեամբ<sup>\*</sup>.)

ԲԵԼԳԻԱՅՈՒՄ սահմանադիր իշխանութիւնը նոյնպէս դանւում է պարլամենտի ձեռքին և նոյնպէս յատուել ակդրունքներով. Պարլամենտը տապահ երկու պարլամենտի ձայների պարզ մեծամասնութեամբ պէտք է որոշի սահմանադրութիւնը վերաքննելու անհրաժեշտութիւնը, բայց ինքը վերաքննել չի կարող: Սահմանադրութիւնը վերաքննելու մասին արած յայտարարութիւնից յետոյ պարլամենտի երկու պարլամենտն էլ արձակուում են, կատարւում է նոր ընտրութիւն, և սահմանադրութիւնը վերաքննում է նոր պարլամենտում իւրաքանչիւր պարլամենտի անդամների<sup>2/3</sup> ներկայութեամբ, ձայների<sup>2/3</sup> մեծամասնութեամբ (սովորական օրէնքների համար բա-

<sup>\*</sup>) Սովորական օրէնսդրական նիստերի օրինականութեան համար պահանջեռում է պարլամենտամասնութիւնը 100-ի ներկայութիւնը (5 16 ընդհանուր թիցց), իսկ վերին՝ ազնւականների պարտում աւելի և քիչ: Սովորական որոշումներն ընդունուում են ձայների պարզ մեծամասնութեամբ:

ւական է անդամների <sup>1/2</sup>-ի ներկայութիւնը և ձայների պարզ մեծամասնութիւնը):

Միևնույնը, այսինքն պարլամենտի նախական որոշումը, նրա լուծումը, նոր ընտրութիւնները, քննութեան ենթարկած սահմանադրութեան վերաքննութիւնը ձայների բարձր մեծամասնութեամբ ընդունուած է Դանիայում, Հոլանդիայում, Նորվեգիայում, և այլուր:

Սովորական այս բոլոր և ուրիշ շատ երկրներում սահմանադիր իշխանութիւնը դանւում է մշենոյն պարլամենտի ձեռքում, որին պատկանում է և օրէնսդիր իշխանութիւնը, բայց նազորնում է մի փոքր այլ պայմաններում, որոշ դժւարութիւններով, որնք վկայում են, թէ սահմանադրութիւնը մի առանձին կարևոր օրէնք է համարնում, որը փոփոխութեան ենթարկելու համար անհրաժեշտ են աւելի զօրեղ դրապահաններ, աւելի խար մտածուածութիւն, քան պահանջեռում է սովորական օրէնք հրատարակելու համար: Այդ դժւարութիւնները վերեն ածւում երկու անդամ հաւաքւած պարլամենտի կրկնակի վերաքննութեանը կամ այսպէս կոչւած յատուկ մեծամասնութեանը, և միշտած պետութիւններից միայն Պրուսիան է, որ բաւականանում է նոյն պարլամենտում, կարճ ժամանակամիջոցում երկու անդամ վերաքննութեան ենթարկելով, մի հանգամները, որը

համարեա երաշխիք չի տալիս աւելի մտածւած և լուրջ աշխատանքի, որովհետև միենոյն պարզամենան այդպիսի կարծ ժամանակամիջոցում չի կարող փոխել իր վերաբերմունքը դէպի դորձը:

Հետևաբար այդ դէպքում սահմանադիր իշխանութիւնը գտնւում է պարզամենտի ձեռքում, և երբ վերաքննութեան համար պարզամենտի արձակում և նոր ընտրութիւն է պահանջւում, տսես թէ սահմանադիր իշխանութեան մի մասը անմիջապէս յանձնւում է ընտրովներին, որովհետև նրանք նոր պարզամենտի ընտրութեան ժամանակ սահմանադրութեան մասին հերթի զրուած հարցին հնարաւորութիւն ունին առանձին ուշագրութիւն զարծնելու: Այս գլխում յիշած բոլոր միապետական տէրութիւնների մէջ պարզամենտի ամեն մի որոշում պէտք է վաւելացի թագաւորի կողմից, և այդ որոշումը նա կարող է և մերժել\*): Սահմանադրութեան վերաքննութիւնը բացառութիւն չի կազմում: Այստեղից հետևում է, որ սահմանադրութիւնը փոփոխելու համար անհրաժեշտ են երկու ազգակների համաձայնութիւնը, — թէ պարզամենտի,

\*) Ինչպէս տեսանք, մրոշ բացառութիւն է կազմում Գերմանական կայսրութիւնը: Այստեղ վաւելացնում է ոչ թէ կայսրը, աւ գաղնակցութեան խորհուրդը, որի անդամ են կայսրութեան մէջ մտնող բոլոր պետութիւնների, կայսրութիւնների լիազօրները:

որ ժողովրդական կամքի գործն է հանդիսանում, թէ թագաւորի, որի իշխանութիւնը, համաձայն արքայական հրովարտակների արտայացտութեան «Աստոծոյ ողորմութեամբ» է արբում, և, հետևապէս, բոլորովին ինքնուրոյն, ժողովրդից անկախ ծագումն ունի:

V

Սահմանադիր իշխանութեան բաժանումը պարզամենի և համաժողովրդական անմիջական ձայնաւութեան միջեւ:

Սահմանադիր իշխանութիւնը կազմակերպելու մի այլ ձևն է նրա բաժանումը պարզամենտի և համաժողովրդական անմիջական ձայնաւութեան միջեւ:

Եթէ 50 հազար շւէյցարացի իրաւասու քաղաքացիներ, (այսինքն զատարանով իրենց իրաւունքներից չզրկւած, չափահասութեան հասած տղամարդիկ) խնդիր (պետիցիա) ներկայացնեն և պահանջեն սահմանադրութեան վերաքննութիւնը, այն ժամանակ կառավարութիւնն ամենից առաջ պարտաւոր է հարցնել ամբողջ շւէյցարական ժողովրդից, թէ արդեօք նա համաձայն է տւած խնդրին:

Այս կարգի պետիցիա արւում է շատ պարզ կերպով: Երկրումն սկսում է ագիտացիա յօ-

դուռ սահմանադրութեան վերաքննութեան։ Ժողովրդական համախմբումներում և մամուլի մէջ ցոյց է տրւում ճին սահմանադրութեան պակասութիւնները և առաջարկուում որոշ պահանջներ պազագայ սահմանադրութեան վերաբերեալ։ Մի քանի անհատներ, կամ որեէ կուսակցութիւն՝ կազմում են համապատասխան պետիցիա, տպում բազմաթիւ օրինակներով և ուզարկում քաղաքներ ու գիւղեր։ Այսաեղ պետիցիան ցուցադրուում է հանրամատչելի մի տեղ և ցանկացող սարրադրում է։ Երբ այսպիսով հաւաքւի 50000 սարրադրութիւն՝ զանազան տեղերից թերթիկներն ի մի են խմբում և ներկայացում կառավարութեան։

Որոշ ժամանակամիջոցից յետոյ նշանակում է համաժողովրդական ձայնատուութիւնն կամ ուժիքենդում։ Բոլոր շեյցարացի քաղաքացիք հրաւիրում են քեէ տալու սահմանադրութեան ընդհանուր փոփոխութեան ցանկալիութեան մասին։ Քւէարկութիւնը տեղի է ունենում տոմսերը (բիւլէտենները) արկղների մէջ ձգելով միայն մի խօսք գրելով—այս կամ ոչ։ Քւէարկութեան և զանակը նոյնն է, ինչ որ պարլամենտի անդամների ընտրութեան ժամանակ, բայց իմուսը տարբեր է։ Այս գէպը ում մարդ չ' ընտրւում, այլ որոշ հարց է քւէարկում։ Եթէ, օրինակ, քւէատութից դուրս գայ 600,000

տոմս 350,000 այն և 250000 ո՞չ առմսերով, շեյցարական պարլամենտը պարտուոր է ձեռնարկել հարցի վերաքննութեան։

Երբ պարլամենտը վերջացնի իր աշխատանքը, նրան պատրաստած օրինագիծը նորից համաժողովրդական քւէարկութեան է դրւում։ Այս անգամ արգէն սեֆերենդումը վերջնական բնուուրութիւն ունի։

Հետեւրար նոր սահմանադրութիւնն անցնում է հետեւեալ տարին նույն կամաժեռութիւնը պատկանում է ժողովրդին (այսինքն առնւազն 50 հազար քաղաքացիների)։

Նախնական սեֆերենդում այն ժամին, թէ հարկ կայ վերանուել սահմանադրութիւնը։

Պարլամենտի լուծում։ Նոր սահմանադրութեան քննութիւն նոր պարլամենտում։

Վերջնական սեֆերենդում։\*)

\*) Ես պարզեցի սահմանադրութիւնը վերաքննելու ձևերից միայն մէկը, որն ընդունուած է Շեյցարիայում։ Բայց կարող է մինչև սակա ուրիշ ձև, որով նախաձեռնութիւնը պատկանում է պարլամենտին։ Այդ գէպը ունակած սեֆերենդում հարկաւոր չէ, և պարլամենտն իր մշակած օրինագիծն անմիջապէս զընում է համաժողովրդական քւէարկութեան։ Սա տեսի պարզ և վարժ միջոց է և կազմւած է միայն երկու աստիճանից։

Սահմանադրութեան վերաքննութիւն պարլամենտում իր սեֆերական նախաձեռնութեամբ։

Պատերացում համաժողովրդական ձայնատութեամբ (սեֆերենդումով)։

Այսպիսով, Շւեյցարիայում համաժողովը բական քւէարկութիւնը սահմանադրութիւնը վերաքննելու խնդրում նոյն գերն է խաղում, ինչ որ միապետական երկրներում՝ թագաւորը. ռեփերենդումի միջոցով վաւերացւում է նոր սահմանադրութիւնը: Տարբերութիւնը, այն էլ շատ կարևոր, կայանում է նրանում, որ այս գէպքում վաւերացնողը ժողովուրդն է, այն ինչ միապետական երկրներում—միապետը (բացառութեամբ Անգլիայի, որտեղ սահմանադրական օրէնքը, կամ առնասարակ որևէ օրէնք թագաւորն իրաւունք չունի չվաւերացնել):

Այսպէս ուրեմն, եթէ միապետական երկրներից մեծ մասում սահմանադիր (ինչպէս և օրէնսդիր) իշխանութիւնը բաժանուում է ժողովրդից ընտրած պարլամենտի և ժողովրդին ներհակ թագաւորի միջև, Շւէյցարիայում բաժանուած է ժողովրդից ընտրւած պարլամենտների և անմիջապէս ժողովրդի միջև: Պարլամենտի անդամներն այսպիսով մի տեսակ ժողովրդական գործակատարներ են համովիսանում, նրան յանձնարարուում է օրինապիծ մշակելը, իսկ վաւերացնուում է արդէն ինրը, աէրը: Ճիշտ է, պատգամաւորները մշակում են սահմանադրութեան նախազիծը—ամբողջ ծաւալով ու բոլոր մանրամասնութիւններով, իսկ ժողովուրդը կարող է կամ ամբողջապէս ընդունել կամ ամբողջապէս

մերժել և չի' կարող ուղղումներ մտցնել մէջը:

Սահմանադրութեան վերաքննութեան համար ռեփերենդում է պահանջնուում նաև Աւստրալիայում և Հիւսիսային Ամերիկայի առանձին նահանգներում:

Դրանից բարձր ռեփերենդումը գործադըրւում է երբեմն այնպիսի պետութիւններում, որոնց սահմանադրութեան մէջ այդ մասին ոչինչ չէ ասւած:

Այսպէս, օրինակ, Նորւեգիան մօտ 100 տարի (1814—1905) կապւած էր Շւէդիայի հետ միևնուն թագաւորի ընդհանուր իշխանութեամբ. շէդական թագաւորը Նորւէգիայի թագաւորն էր, այդ երկու պետութիւնների արտաքին գործոց նախարարութիւնն էլ ընդհանուր էր, այնպէս որ միւս պետութիւնների հետ կապւած բոլոր գործերը վարում էին միասին; Եթէ Շւէդիան պատերազմ յայտարարէր, Նորւեգիան էլ պարտաւոր էր նոյնն անել:

Նորւեգիան չափազանց դժգոհ էր Շւէդիայի հետ ունեցած էր պարտադիր կապով: XX դարու սկզբներից դժգոհութիւնն սկսեց սուր կերպարանք ստանալ, 1905 թ. մայիս ամսին Նորւեգական ստորախնդը (պարլամենտը) մի օրէնք ընդունեց, որով երկու երկրների արտաքին գործոց նախարարութիւններն առանձին են դառնուում: Թագաւորը մերժեց վաւերացնել: Այն ժա-

մանակը, 1904թ. յունիս 7 ստորափնդը միաձայն՝ որոշեց բաժանուել Շւեդիայից և նշանակեց ժամանակաւոր կառավարութիւն։ Զօրքը երգւեց ժամանակաւոր կառավարութեան, եկեղեցիներում չէին յիշատակում թագաւորի անունը, դա արանն սկսեց վճիռներ կայացնել ո՛չ թէ թագաւորի, այլ ժամանակաւոր կառավարութեան անունից։

Այդ կերպ վարւելով՝ ստորափնդը խախտեց սահմանադրութիւնը և պարզապէս յեղափոխական դործ կատարեց։ Սակայն չկամենալով դործը պատերազմի հասցնել՝ որոշեց խորել թագաւորին, որ նա իր կրտսեր որդիներից մէկին թոյլ տայ նորւեգիայի գանց նստել, որպէս այդ երկրի միահնդամայն ինքնուրոյն իշխան։ Բայց թագուորը զայրացած էր և կարուկ կերպով մերժեց այդ րանը։ Սկզբում նա պարզապէս պատերազմական պատրաստութիւններ էր տեսնում, նորւեգական կառավարութիւնն էլ պատրաստում էր ինքնապաշտպանութեան։

Կատարւած յեղաշը ևն սմբապնդելու համար ստորափնդը որոշեց Շւեդիայի հետ ռնեսցած դաշինքը խախտելու հարցը համաժողովը դական քւէարկութեան դնելու Ռեֆերենդումը բարձր տրամ գրութիւն առաջ բերեց ժողովութիւն մէջ, յօդուու Շւեդիայի հետ գաշինքը խախտելու և առանձին պետութիւն կազմելու ձայն տեսեց

321000 մարդ, դէմ—ընդամենը՝ 161 մ. նորւեգական ժողովրդի այդտեսակ համերաշխութիւնը Շւեդիայում ուժեղ տպաւորութիւն գործեց և վէճի խաղաղ լուծման հարցը վճռեց գրական խմասուվ։

Դրանից անմիջապէս յետոյ Նորւեգիայում նարց ծաղեց կատալարութեան ձեր մասին։ Մինչ այդ Նորւեգիան թագաւորութիւն էր և Շւեդիայի հետ մի ընդհանուր թագաւոր ունէր։ Արդեօք նա նորից թագաւորութիւն պէտք է մնար մի նոր թագաւորով, թէ պէտք է անցնէր հանրապետութեան։ Հանրապետութեան կողմանից էլին սոցիալ-դեմոկրատները և արմատականները, Զափաւոր կուսակցութիւնները միավետութիւն էին պահանջում։ Յաղթեցին վերջինները, Պարլամենտի վճռով Նորւեգիան հարապակուեց սահմանադրական միապետութիւն և թագաւոր հրավիրեց Գայ խայի իշխան Կարլը, հարցը, սակայն, վերջնուկան չհամարւեց և դրւեց համաժողովը դական քէարկութեան։ Ժողովուրդը ուժիքերեն գումարվ հաստատեց պարլամենտի վճիռը։

Ներկայ դէպքում ուժիքերենդումի միջոցով երկու անդամ վաւերացւել են նորւեգական ստորափնդի երկու ամենակարևոր սահմանադրական որոշումները, թէ և սահմանադրութեան մէջ վերաբննութեան այս եղանակի մասին ոչնիշ չիշւած։

## VI

Սահմանադիր ժողովը ներկայումս գործող սահմանադրութիւնների մէջ

Սահմանադրութիւնը վերաքննելու երրորդ և վերջին հղանակն է սահմանադիր ժողով գումարելը:

Ներկայ միապետական երկրներից Բոլգարիայում, Մերրիայում և Յունաստանում ընդունւած է սահմանադիր ժողովը: Մեծ հանրապետութիւններից այդ մասին յիշում է Միացեալ Նահանգների սահմանադրութեան մէջ: Սահմանադիր ժողովը ընդունւած է Հարաւ-Ամերիկեան հանրապետութիւններից մի քանիսում, Ժենեվ և Շվեյցարիան մի քանի ուրիշ կանոններում և Հիւսիսային Ամերիկայի Նահանգներից շատերի մէջ\*): Սահմանադիր ժողովը նմանուում

\*) Շվեյցարիան դաշնակցական պետութիւն է բաղկացած 22 կանոնից, որոնցից խրաքանչիւրը առանձին հասարակագիտութիւն է իր առանձին սահմանադրութեամբ և կառավարութիւնով: Միայն մի քանի ընդհանուր հարցերի համար—արտաքին քաղաքականութիւն, մաքսատուն, դօք, երկաթուղիներ, փոստ, հեռագրատուն և այլն—22 կանոնները կազմում են միութիւն, կամ Շվեյցարիայի դաշնակցական պետութիւնը. նոյնպէս և Միացեալ-Նահանգները—դաշնակցական հանրապետութիւն է, բաղկացած 48 առանձին հանրապետութիւններից, որոնք կոչում են նա-

է պարլամենտի այն տեսակէտից, որ ժողովը դական ներկայացուցութիւն է և կազմւած է ժողովրդից ընտրւած պատգամա որներից: Տարբերութիւնն այն է, որ նա ունի ոչ թէ օրէնսդիր, այլ սահմանադիր իշխանութիւն, այսինքն մի յատուկ իշխանութիւն, որով կարող է վերաքննել և մասնակի փոփոխութիւնների ենթարկել սահմանադրութիւնը, կամ թէ չէ բոլորովին նոր սահմանադրութիւն մշակել\*):

\*) Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներում սահմանադրութիւն վերաքնննութիւնն երկու կերպ է թուատրում—կամ պարլամենտի երկու պալատների ձայների  $\frac{2}{3}$ -ով, կամ սահմանադիր ժողովով (կոնվենտ): Գատորէն սակայն, սկսած 1787 թից, երրամբագելֆիայի սահմանադիր ժողովը (կոնվենտ) մշակեց Միացեալ Նահանգների մինչև այսօր էլ զործող սահմանադրութիւնը, ոչ մի անգամ սահմանադիր ժողով չի հրաւիրել և սահմանադրութեան ուղղումները, թույլ 16. կատարել է պարլամենտը: Դրանց թույլ են 1865—1866 թ. ուղղումները, որոնցից առաջինով վերացում է նեղըերի ստրկութիւնը, իսկ երկրորդով նրանց չորհուում են բոլոր քաղաքական իրաւունքները: Ըստհակառակն, առանձին նահանգների սահմանադրութիւնները, ամենից յաճախ վերաքննուում են սահմանադիր ժողովների (կոնվենտների կողմից):

Նահանգներ (շտատներ): Խրաքանչիւր նահանգ ունի իր սեփական սահմանադրութիւնը անկախ ընդհանուրից—իր պալամենտը և իր կառավարութիւնը: Գերմանական կայսրութիւնն էլ դաշնակցական պետութիւնն է բաղկացած 26 պետութիւնից, այն տարբերութիւնները միայն, որ այսակ բոլոր պետութիւնները միապետական են և ինքը Գերմանիան ամբողջովին վերցրած մի միապետական կայսրութիւն է:

VII

Ինչպէս է ընտրում սահմանադիր ժողովը:

**Առայժմ ես կը խօսեմ այն սահմանադիր ժողովների մասին,** որոնք յիշատակւում են ներկայումս գործող սահմանադրութիւնների մէջ, ուրիշ խօսքով վաղուց արդէն սահմանադրական պետութիւն դարձած երկրների սահմանադիր ժողովների, որոնց մէջ ինքը սահմանադրութիւնը նախատեսեսել է հնարաւորութիւնը և առաջուց նախորշշել միջոցը իր վերաքննութեան: Յեղափոխական սահմանադիր ժողովների մասին, որոնք գործում են այնպիսի երկրներում, ուր առաջ սահմանադիր ժողով ընդունւած չի եղել կը խօսենք յետագային:

Առաջին հարցը, «ր մենք պէտք է պարզենք, այն է, թէ ինչպէս են ընտրում սահմանադիր ժողովները»:

Միանգամային պարզ է, որ եթէ սահմանադիր ժողովը հաստատած է գործող սահմանադրութեամբ, նրա և սովորական պարլամենտի ընտրութիւնների մէջ տարբերութիւն չի կարող լինել: Իսկապէս, եթէ մենք սահմանադրութիւն մշակերպ օրէնսդիր իշխանութիւնը յանձնում ենք ամբողջ ժողովրդին, ուրիշ խօսքով, պարլա-

մենտի ընտրութիւնը նշանակում ենք ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի քւէարկութեամբ, տարօրինակ կը լինէր, եթէ ընդունէինք, որ սահմանադիր իշխանութիւնը պատկանում է մի այնպիսի ժողովի, որն ընտրւել է ոչ թէ ամբողջ ժողովրդի, այլ նրա մի մասի կողմից: Եւ ընդհակառակին, եթէ ընդունենք, որ քաղաքական իրաւունքներ պէտք է տալ որոշ կարողութիւն ունեցող մարդկանց, չափազանց զարմանալի կը լինէր, եթէ ապագայ սահմանադիր ժողովների համար ընդհանուր ընտրական սկզբունքն ընդունէինք: Ակնյայանի բան է, որ ընդհանուր ժողովրդական քւէարկութեամբ ընտրւած հէնց առաջին սահմանադիր ժողովը պիտի վերացնէր պարլամենտի համար սաեղծւած քւէարկութեան սահմանափակումները:

Եթէ, օրինակ, 12 տարի սրանից առաջ, երբ Ռուսաստանում ստեղծւեց Պետական Դումա, թոյլատրւէր սահմանադրութիւնն վերաքընել սահմանադիր ժողով վ, անկասկած այդ ժողովը պիտի ընտրւէր նոյն տեսակ բազմաստիճանն եղանակով, հինգ առանձին կուրիաներ ընտրողների միջոցով, ինչպէս ընտրում էր Պետական Դուման: Եթէ հիմա մեր սահմանադիր ժողովը վճռի որ ապագայ պետական դռնաները պէտք է ընտրւեն ընդհանուր ձայնատութեամբ, — կասկած չի կարող լինել, որ նա

քւէարկութեան սահմանափակումներ թողլ չփ կարագ տալ նաև ապագայ սահմանադիր ժողովների համար, Սահմանադիր ժողովների և պարլամենտների կազմի մէջ կայ միայն մի էական տարբերութիւն: Պարլամենտներն առահասարակ, (սակայն ոչ միշտ) կազմւած են երկու պալատից, այն ինչ սահմանադիր ժողովը կազմում է պատգամաւորների մի պալատից: Բայց սահմանադիր ժողովի և պալատների մէջ կան երկրորդական տարբերութիւններ: Երեք երկրորդական պետութիւնների մէջ, — Բոլգարիայում, Սերբիայում և Յունաստանում, — որտեղ սահմանադրութիւնը վերաքննելու համար Սահմանադիր ժողով է պահանջում, սահմանադիր ժողովի պատգամաւորները պարլամենտի համեմատութեամբ պէտք է երկու անդամ աւելի լինեն: Այսպէս օրինակ՝ Բոլգարիայում սովորական պարլամենտի համար ազգայնակութիւնից 20,000 մարդը մի պատգամաւոր է ընտրում — ընդամենը 212 պատգամաւոր: Այն ինչ Մեծ ժողովրդական ժողովի (սահմանադիր ժողով) համար, ամեն 10,000 հոգին ընտրում է մի պատգամաւոր, — ընդամենը 42 պատգամաւոր:

Բայց այդ երկուսի համար էլ միենոյն ընտրական եղանակն է զործադրուում: Յունաստանում և Բոլգարիայում ինչպէս պարլամենտի

նոյնպէս և սահմանադիր ժողովների համար ընդունուած է ընդհանուուր ձախառուութեան սկզբունքը: Մերժիայում թէ ինչպէս ովկորական, և թէ արտակարդ սկուուղչինայի համար զործադրուում է որոշ սահմանափակում: այն է, ընտրութիւններին մասնակցել կարող են միայն նրանք, որոնք վճարում են 15 ֆրանկից ոչ պակաս ուղղակի հարկ: Եւ այնուամենայնիւ այս երկու հիմնարկութիւնների կազմի մէջ կայ որոշ տարբերութիւն և այն էլ ոչ միայն թւական:

Երբ որ պարլամենտի համար որոշ ժամանակամիջոցով պատգամաւոր ենք ընտրում, մենք զեկավարուում ենք այն քանով, թէ ինչ քաղաքական կուսակցութեան է պատկանում նա և ինչ կարծիք ունի որոշ հերթական հարցերի մասին: Բայց մենք չենք իմանում, թէ նա ինչպէս կվերաբերի մի հարցի, որը կարող է առաջ դալ տարիներ յետոյ: Երբ որ 1912 թ. Պետական Դումայի համար մեր ընտրովները ուղարկամատորներ էին ընտրում, նրանք կարող էին հետաքրքրուել, թէ ընտրելին ինչ քանակի է պատկանում: աջակողմեաններին, հոկտեմբերեաններին, կաղետներին, աշխատաւորականներին, թէ սոցիալ-դեմոկրատներին: թէ նա ինչ հայեացք ունի հրէական, հողային, զործարանային օրէնսդրութեան և այլ հարցերի մասին: Բայց 1912 թ. ոչ ոք մտքովը չէր անց-

կացնի հարց տալ ապագայ պատգամասորներին թէ նրանք մեծ պատերազմի ժամանակ ի՞նչ օրէնքներ պէտք է հրատարակեն, որովհետև այն ժամանակ պատերազմի մասին ոչ ոք չէր էլ մտածում։ Ճիշտ այսպէս մենք չենք կարող հարցնել պատգամաւորին, թէ նա ի՞նչ վերաբերմունք ցոյց կտայ սահմանադր Վթիւնը վերաքննելու հարցին, եթէ դա հերթի է դրւելու 3 4 տարի յետոյ։

Ընդհակառակը, եթէ մենք ընտրում ենք սահմանադր Ժողովի պատգամաւոր, որ յառակապէս գումարւում է սահմանադրութիւնը քննելու համար, մենք հարց ենք տալիս մեր քենակը շահելու համար պայքարող մարդկանց, թէ արդեօք նրանք ի՞նչ են պաշտպանելու միապետութիւն թէ հասարակապետութիւն, ըստացւացքային ցենզի վրայ հիմնւած սահմանափակ քւեարկութիւն, թէ ընդհանուր ընտրական իրաւունք, ազատութեան ճնշում, թէ խօսքի, դաւանանքի ազատութիւն, և այլն։ Պէտք է ասել, որ այս նոյն նկատողութիւնը վերաբերում է նաև այն դէպքերին, երբ, ինչպէս օրինակ Բելգիայում, պարլամենտներն արձակւում են և նորից գումարւում յատկապէս սահմանադրութիւնը վերաքննելու համար։

### VIII

Ի՞նչ հարցեր են դրւած սահմանադիր Ժողովների առաջ։ Սահմանադիր Ժողովները իշխանութեան սահմանափակ լինելը։

Բոլգարիայում Ժողովրդական մեծ (Սահմանադիր) Ժողովը գումարւում է ոչ միայն սահմանադրութիւնը քննելու, այլ և որ թագաւորը ընտրելու համար, եթէ նախարարը մեռել է անժառանգ։ Այսպիսի մի դէպք, երբ թագաւորը հրաժարւում է գահից առանց ժառանգ թողնելու, բոլգարական սահմանադրութեան մէջ չի նախատեսնւած։ Այս ի՞նչ այդ տեղի ունեցաւ 1886 թ.։ Այն ժամանակ սահմանադրութեան համապատասխան յօդւածը բացատրւեց աւելի ընդարձակ իմաստով, և թագաւորը ընտրելու համար Ժողովրդական մեծ Ժողով գումարւեց։

Առանց այդ մեծ Ժողովի ըստ Բոլգարական սահմանադրութեան, ոչ մի հողամաս չի կարող զիջւել ուրիշին, բայց այդ որոշումը միշտ չի իրագործւում։ 19·3 թ. Սերբիայի, Յունաստանի և Ռումինիայի հետ Բոլգարիայի վարած անյաշող պատերազմից յետոյ՝ Բուխարեստում կո ող կողմերի լիազօրները հաշտութիւն կնքեցին, որով Բոլգարիան Ռումինիային

Եր զիջում սրոշ հողամաս։ Այս հաշտութիւնը վաւերացնելու համար անհրաժեշտ էր ժողովրդական մեծ ժողով գումարել, բայց այդ տեղի չունեցաւ։ հաշտութեան պայմանները քննութեան նիւթ չդարձան նոյնիսկ սովորական ժողովրդական ժողովում (պարզաբնաւում) և հաստատեցին Ֆերդինանդի անձնական իշխանութեամբ։ Սա, ի հարկէ, սահմանադրութեան ամենակոպիտ խախտումն էր։ Սակայն այդ ասթիւ ու ոք ծպտուն անգամ չհանեց ոչ միայն թագաւորի կողմանիցներից, այլև և նրա հակառակորդներից, որոնց թիւը, պէտք է ասել, Բողդարիայում բաւտիկան շատ է, և նրանք վախկուա չեն։ Բողդարիան քայլայւել և ուժատված էր եղել պատերազմից։ խաղաղութիւնը միակերպ անհրաժեշտ էր բոլորի համար և բոլորն այդ պահանջը զգում էին։ Հաշտութիւնը կնքելլ յետաձգել մի քանի ամիս, մինչև սահմանադրը ժողովի ընտրութիւններ կայանալը, միանգամայն սմբնարին էր։ և բոլորը լսելիս համաձայնեցին սահմանադրութեան խախտմանը։ Պարզ է, որ սահմանադիմը փոխերու մասին եղած կէտը սահմանադրութեան մէջ թեթևամորէն էր մտցւած, և սահմանադրութիւն ստեղծագործողները չեին նախատեսէլ, որ նրա խախտումն անհրաժեշտութիւն կարող է դառնալ։

Այս երկներում, որոնք սահմանադրու-

թեամբ նախատեսւած է սահմանադրի ժողով, նու միայն մի հարցով կարող է զբաղւել. այն է, սահմանադրութեան լրիւ (նոր սահմանադրութիւն մշակել) կամ մասնակի փոփոխութիւններ (որոշ ուղղութեար սահմանադր ւթեան մէջ) կարող է անել։

Նոյնիսկ սահմանադրութեան վերափոխելը իր ամբողջ ծաւալով ամեն անգամ չի պատկանում սահմանադրի ժողովին։

Այսպէս, օրինակ, Յունաստանում սահմանադրութիւնը չի կարող ենթարկել ընդհանուր վերաֆնսութեան, միայն օնրա առանձին, այն էլ ընաւ։ ոչ հիմնական մասերը քննութեան առարկայ կարող են դառնալ սահմանադրութիւնը հրատարակելուց 10 տարի յետոյ, եթէ դրա անհրաժեշտութիւնն ապացուցվի հարկ եղած կերպով։ ասած է 1864 թ. (ներկայումս գործադ), յունական սահմանադրութեան 107-րդ յօդածի մէջ։ Այս յօդածից երկում է, որ.

Առաջին, սահմանադրութիւն կազմողները նրա փափոխութիւնը 10 տարւայ ընթացքում անթոյլատրելի են համարել։

Երկրորդ, նրանք անփոյլատրելի են համաձեւել սահմանադրութիւնն ամբողջ ծաւալով վերաբնն ելու։

Միանեալ նահանգների սահմանադրութիւնը նոյնպէս չի թոյլատրում ամբողջական վե-

բաքննութիւն, այլ խօսում է միայն մասնակի ուղղումների մասին։ Այս երկու երկրներում էլ սահմանադրութիւնն իր հիմնական գծերով համարւում է յաւերժական և անխախտ։ Այսպիսվ Միացեալ Նահանգների դաշնակցական (Փետրատիւ) պետութիւնից կենդրոնացած պետութիւն դառնալու կամ հասարակազետութիւնից կայսրութիւն դառնալու համար օրինական ճանապարհ գոյութիւն չունի, ինչպէս և Յունաստանն օրինական ճանապարհով միապետութիւնից չի կարող անցնել հասարակապետութեան<sup>+</sup>։

Բոլգարիայում և Սերբիայում սահմանադիր ժողովների համար այդպիսի սահմանափակումներ չկան, բայց այնուամենայնիւ սահմանադիր իշխանութիւնն իր ամբողջ ծաւալով նըանց չի պատկանում։

Սահմանադիր, ինչպէս և օրէնսդիր իշխանութեան մէջ պէտք է զանազաննել երեք պահ։

1. Նախաձեռնութիւնն (ինիցիատիւ) կամ որոշ օրէնքի ներկայ գէպքում սահմանադրութեան իրագործութեան արծարծում։

2. Նոր օրէնքի կամ նոր սահմանադրութեան (կամ նրա առանձին մասերի) վերաքրննութիւն և մշակում։

<sup>\*)</sup> Ճիշտ այդպէս ֆրանսիական ազգայի ժողովն էլ իրաւունք չունի հասարակապետական ձևը դարձնել միապետական։

3. Օրէնքի կամ սահմանադրութեան վաւերացում (սահմանադիր)։

Որ սահմանադիր ժողովին սահմանադրութիւնը քննելու նախաձեռնութիւնը չի կարող պատկանել, դա պարզ է հէնց առաջին հայեացքից։ Զէ որ նա գումարելում է յատկապէս սահմանադրութիւնը վերաքրնելու և ոչ այլ ինչի համար (Բոլգարիայում, ինչպէս տեսանք, նա կարող է գումարել և ուրիշ նպատակների համար), ուրեմն նախաձեռնութիւնը կատարւած է որեէ անհատի կամ հիմնարկութեան կողմից։

Մենք արդէն ցոյց տւինք, որ սահմանադիր ժողով գումարելու, հետեաբար և սահմանադրութիւնը վերաքրնելու նախաձեռնութիւնը մեծ մասամբ պատկանում է պարլամենտին։ ընդումին սահմանադիր ժողով գումարելու մասին պարլամենտի արած կարգադրութիւնը միապետական երկրներում պէտք է վաւերացւի թագաւորի կողմից<sup>\*</sup>)։ Միացեալ Նահանգներում նախաձեռնող կարող էին լինել առանձին նահանգները։ Շւէյցարիայում թոյլաորեում է ժողովրդական նախաձեռնութիւն։ Վերոյեշեալ երկրներում, ինչպէս տեսանք սահմանադրութեան վերաքրնութիւնը պատկանում է սահմանադիր

<sup>\*</sup> Նախաձեռնութիւնը կարող է պատկանել թագաւորին, իսկ հասարակապետական երկրներում՝ հասարակապետութեան նախագահին։

ժողովին: Արդեօք նա վերջին և վճռական կէտնէ (ինստանցիա):

Ոչ, նոր սահմանադրութիւնն ինչպէս և ամեն մի նոր օրէնք, պէտք է վաւերացւի:

Միացեալ Նահանդներում միապետ չկայ, իսկ նախագահն իրաւոնք չունի սահմանադիր ժողովի վճիռը չվաւերացնել: Բայց այստեղից չի հետեւմ, թէ այդ վճիռը վերջնական է: Ոչ: Նա առաջարկւում է առանձին նահանդների քըննութեանը և ուժ է ստանում միայն այն դէպքում, եթի բոլոր նահանդների <sup>3/4</sup>-ի հաւանութիւնն է ստանում:

Առանձին նահանդները գաշնակցական սահմանադիր ժողովի որոշումը քննութեան են ենթարկում իրենց պարբաժնութերում, կամ յատկապէս այդ նպատակով զումարւած կոնսենտներում (սահմանադիր ժողովներում), որտեղ և հաստատում կամ մերժում են. \*) բայց մենք գիտենք, որ փառորին Միացեալ Նահանդներ

\*) Այս հանգստմանքը բացատրւում է նրանով, որ Միացեալ Նահանդները կազմւած էին երեսն ինքնուրոյն նահանդ-պետութիւններից: Միանալով յօդուանշնակցութեան, նրանք հրաժարուեցին իրենց լիակատար ինքնուրոյնութիւնից, ուստի և հարկ համարեցին դժուարին դարձնել սահմանադրութեան այն տեսակ փոփոխութիւնները, որոնցից կարող էր առաջ գալ նըրանց իրաւունքների յիտապայ լրճատումը: Այդ նպատակով նրանք իրենց վերապահեցին սահմանադրութեան որևէ փոփոխութիւն նահանդների <sup>1/4</sup>-ից աւել ձայնով

ժողով երբէք (1787 թ.) սահմանադիր ժողով չի գումարւում: Հիւսիսային Ամերիկայի դաշնակեցութեան առանձին նահանդներում կժնւենսների (սահմանադիր ժողովների) մշակած սահմանադրութիւնը վաւերացւում է համաժողովրդական քէարկութեամբ (ունքերենդումով). Նոյնը պարտադիր է նաև ժընկի և Շեէցարական միւս կանոնների համար:

Այսպիսով սահմանադիր ժողովն իր առաջ դրած ինդիրները լուծելու համար սպհմանափակ գրջան ունենալով, միևնույն ժամանակ լիազօր չէ (կամ սոււերեն չէ, ինչպէս ասում են իրաւաբանները), որտինեակ նրանից բարձր կանգնած է կամ թագաւորի կամ համաժողովրդական քէարկութեան վաւերացումը:

Ի հարկէ, այս երկու վաւերացումները բարրովին տարբեր բնաւորութիւն ունեն: Որովհետեւ սահմանադիր ժողովն ընտրւած է ժողովրդի կողմից, թէև անհնարին չէ, որ մի որոշ հարցի

մերժելու իրաւունքը: Սրան բաւական նման գէոր մենք տեսանք մի այլ գաշնակցական պետութեան-դիրմանական կայսրութեան մէջ, բայց պէտք է նկատել, որ այստեղ կայ և լուրջ տարբերութիւն: Սահմանադրութիւնը վերաբնելու համար Ամերիկայում պահանջում է համարեա թէ միաձայն համաձայնութիւն նահանդների, պարբամենսների կամ սահմանադիր ժողովների, հետևաբար և նրանց ժողովրդների: այն ինչ Գերմանիայում պէտք է կայսրութեան մէջ մտնող պետութիւնների — այսինքն, թագաւորների, գուբանների և իշխանների համաձայնութիւնը:

վերաբերեալ համաժողովրդական քւէարկութիւնը նրա հետ բաժանուի, այնուամենայ իւ անկարելի է երևակայել, որ այդ բաժանումն այնքան էլ խորունկ լիսի:

Եւ ընդհակառակը, սահմանադիր ժողովի և թագաւորի մէջ ո՛չ միայն հասրաւոր է, որ բաժանում տեղի ունենայ, ներհակութիւն առաջ դայ, այլ դա միանդամայն սպասելի է, իսկ որոշ գէպքերում ուղղակի անխուսափելի: Քիչ է պատոհում, որ թագաւորները զիջող լինեն, մասնաւանդ, երբ հարցը նրանց իշխանութեան է վերաբերում: Թագաւորը հազիւ թէ սահմանադիր ժողով հրաւիրելու համար պարլամենտի կայացրած վճիռը վաւերացնի, եթէ նա այդ ժողովից իր համար անհաճոյ որոշումներ սպասի, իսկ եթէ գումարի էլ չի համաձայնի հաստատել նրա որոշումները: Դժւար է պատկերացնել, որ թագաւորը համաձայնութիւն տայ միապետութիւնը վերացնելուն կամ նոյն իսկ միապետի իրաւունքների որոշ կրծատումներին, եթէ յղափոխութեան սպաննալիքը չլինի: Այդ էլ սակաւ է տեղի ունենում, առհասարակ մապետներն այն ձեռվ են տանում զործը, որ բանը հասնում է յեղափոխութեան բռնկման, որը և տապալում է նրանց: Այնպէս որ կարելի է ասել—ո՛չ միայն Յունաստանում, որտեղ սահմանադրութեան հիմնովն փոփոխելն արգելած է հէնց սահմանա-

դրութեամբ, այլ և Ոերբիայում ու Բոլգարիայում, որտեղ սահմանադրութիւնն այդ տեսակ որգելքներ չի դնում, միապետութիւնը հասարակապետութեան փոխելու համար օրինական ճանապարհ չկայ: Յամենայն գէպս, ինչպէս տեսանք, Ֆրանսիայում և Միացեալնահանգներում հենց սահմանադրութեամբ այդ տեսակ ճանապարհը բոլորովին փակւած է:

Սակայն չպէտք է մոռանալ, որ կառավարութեան ձեփ մէջ հիմնական կամ մասնակի փոփոխութիւն անելու համար օրինական միջոցների անհնարաւորութիւնը չի կարող արգելք հանգստնալ այդ տեսակ փոփոխութիւնների առաջ դարձն:

Ֆրանսսիական յեղափոխութեան ժամանակ հաւատում էին, թէ ամեն մի նոր մշակւած սահմանադրութիւն գերազանց է և թեթեամտութիւն է մօտ ապագայում նրա փոփոխութեան մասին մտածելը. այդ պատճառով 1791 թ. մըշակած առաջին սահմանադրութեան մէջ շեշտւած էր, որ նա 10 տարւայ ընթացքում չի կարող փոփոխութեան ենթարկել: Այն ինչ, նոյն իսկ մի տարի չանցած յեղափոխական հեղեղը քշեց այդ սահմանադրութիւնը, և 1792 թ. առաջին օրէնսդիր ժողովը կոնւենտ գումարեց (նոր սահմանադիր ժողով), որտեղ հիմնական փոփոխութեան ենթարկեց այն: Վերցնենք մի ուրիշ

պատմական օրինակ: Խոչպէս աւեսանք, Միացեալ-նահանգներում սահմանադրութիւնը կարող է մասնաւոր փոփոխութիւնների ենթարկել և այդ փոփոխութիւնները կապւած են մի շարք դժւար պայմանների հետ: Այսուամենայնիւ, Միացեալ նահանգների 100 ամեայ պատմութեան մէջ տեղի է ունեցել մի բոլորովին յատուկ փոփոխութիւն, որ սահմանադրութեամբ չի նախատեսնըւած և նրա ոգուն հակառակ է: Մինչև 1863 թ. Հիւս. Ամ. հարաւային նահանգներում գոյութիւն ունէր նեղերի սարկութիւն: Սրդիւնաքերութեամբ զբաղւող հիւսիսը թշնամաբար էր վերաբերում այդ երեսյթին: Սարկութիւնը համարում էր ամեն մի նահանգի ներքին գործ, ուստի և կարող էր գոյութիւն ունենալ Դաշնակցութեան մի մասում, առանց տարածւելու միւս մասի վրայ: Սակայն այդ անքնական դրութիւնը միշտ բաղխումներ էր առաջ բերում: Այսպէս, օրինակ, պատահում էր յաճախ, որ սարկատիրական նահանգներից սարուկները փախչում էին ազատ նահանգները: Նրանց յետ առլու հարցը դառնում էր վեճի առարկայ, յու զում կրքերը և մշտական ընդհարումների պատճառ դառնում: Ակզրում յաղթում էր սարկատէր հարաւը: Բայց արդիւնաբեր հիւսիսը գորգանում և աճում էր աւելի արագ, քան սարկատէր հարաւը, և վերջապէս, 1860 թ. դաշնակցութեան

նախագահ ընտրելու ժամանակ սարկութեան հակառակորդ ընտրողները գերալշուցին, և նախագահ ընտրեց սարկութեան թշնամի Արքհամ Լինկոլնը: Հարաւում վախ առաջացաւ, որ Լինկոլնը կարող է կտրուկ մրջոցների դիմել, որոնք սարկական դրութեան համար վտանգաւոր կլինեն:

Նախագահի ընտրութիւնը կատարւում է նոյեմբերին, իսկ իր պաշտոնը ստանձնում է միայն 4 ամիս անց, մարտի 4-ին:

Հարաւի կողմանկիցները 4 ամսւայ ժամանակի շոցից օգտւեցին՝ պահերով իշխանութիւնն իրենց ձեռքում և սկսեցին վճռական գործողութիւնների պատրաստութիւններ տեսնել:

Սարկատէր նահանգներից մէկի, Հարաւային կարովնայի պարլամենտը, հենց որ լուր առաւ, որ քւէների մեծ մասը արւած է յօդուա Արքահամ Լինկոլնի, իսկոյն որոշեց իր սահմանադրութիւնը հիմնական փոփոխութեան ենթարկել: Մինչև այդ Հարաւային կարովնան մտնում էր չիւսիսային Ամերիկայի Միացեալ նահանգների Դաշնակցութեան մէջ և այսպէս էլ ասած էր սրա սահմանադրութեան մէջ, իսկ հիմայ նա պատրաստում էր դուրս գալ, կամ կազմել բոլորովին առանձին պետութիւն կամ մտնել որևէ ուրիշ դաշնակցութեան մէջ: Այդ որոշումից յետոյ՝ իսկոյն Հարաւային կարովնայի պարլա-

մենտը արձակւեց, և նշանակւեցին կոնւենտի (սահմանադիր ժողովի) ընտրութիւնները: 1860 թ. գեկտեմբ. 20 Հարաւային Կարոլինայի կոնւենտը գումարւեց և փոխեց 1788 թւին իր կայացրած այն որոշումը, որով նա մտնում էր Հիւս. Ամ. Միաց. Նահ. Դաշնակցութեան մէջ:

Այսպիսով նա խզեց Միաց. Նահանգների հետ ունեցած դաշինքը:

Յետագայ ամիսներում, Հարաւային Կարոլինայի օրինակին հետևեցին միւս ստրկատէր Նահանգները:

1861 թ. անշատւած նահանգների պատգամաւորները գումարեցին Մոնտեներիում (Ալաբամա նահանգում), իրենց սահմանադիր ժողով հոչակեցին և կազմեցին, Հիւս. Ամ. Միաց. Նահանգների 11 նահանգների մի նոր դաշնակցութիւն. մշակեցին նաև իրենց սահմանադրութիւնը:

Ներկայ դէպքում հարաւային նահանգների սահմանադիր ժողովի որոշումը հակասահմանագրական և յեղափոխական մի գործողութիւն էր, ոտկայն յեղափոխական ենք անւանում միայն ըստ ձեփ, որովհետեւ նա խորտակում էր գոյութիւն ունեցող պետական կազմը. ըստ էութեան դա յետագիմական էր, որովհետեւ գործում էր ոչ թէ յանուն աղատութեան, այլ յանուն ստըռկութեան:

Եւ նոյն հարաւային նահանգներն էլ առաջնորդ սկսեցին պատերազմական դործողութիւնները:

Սկսեց մի յամառ պատերազմ: Սկզբում յաջողութիւնը Հարաւի կողմն էր:

1862 թ. սեպտեմբ. 22. Լինկոլնը մի առանձին յայտարարութեամբ անշատւած նահանգների սահմաններում ապրող բոլոր ստրուկնեցին ազատ հոչակեց: Այս յայտարարութիւնն էլ իր հերթին մի յեղափոխական գործ էր, թէ ըստ ձեփ և թէ ըստ էութեան, ըստ ձեփ, որովհետեւ առանց սահմանադրութիւնը փոխելու Լինկոլն երաւունք չունէր առանձին շտատների ներքին գործերի մէջ խառնւելու (ստրկացիրութիւնը մինչ այդ համարում էր ներքին գործ) և ըստ էութեան, որովհետեւ Լինկոլն իր անձնական իշխանութեամբ տապալում էր մի այնպիսի կարեոր սոցիալական հիմնարկութիւնն, ինչպիսին ստրկութիւնն էր, որի վրայ հիմնած էր Դաշնակցութեան ամբողջ կիսի պետական և հասարակական կեանքը:

Բայց դրա հետ միասին Լինկոլն այնքան զոյց էր, որ ազատ չյայտարեց այն նահանգների ստրուկներին, որ թէև չէին վերացրել ստրկատիրութիւնը, բայց և չէին միացել անշատւած նահանգներին: Այդ նահանգներում նա հարկ համարեց յարգել սահմանադրութիւնը,

Պէտք է նկատել, սակայն, որ ստրուկներին ազատ յայտարարելն աւելի շուտ հանդիսաւոր խոռոշումի արժէքը ունէր, քան իրական միջոցի, որովհետեւ այդ խոստումը միանգամայն անհարին էր իրագործել պատերազմող և նոյն իսկ յաղթող նահանգների սահմաններում։ Այնուամենայնիւ այս յայտարարութիւնն ահազին նշանակութիւն ունեցաւ. նա կառավարական գօրքերի շարքն ստուարացրեց բազմաթիւ ատլստամբած ստրուկներով, անջատւած նահանգներում լուրջ խառնակութիւններ առաջ բերեց և այդպիսով հեշտացրեց կառավարութեան և ազատութեան գործի յաղթաւակլը։

Հնգամեայ (1861—1865) յամառ և արիւնահեղ պատերազմից յետոյ Միացեալ Նահանգների կառավարութիւնը յաղթահարեց ստրկատէր նահանգներին, նրանց դաշնակցութիւնը յայտարարեց լուծւած և պարտաւորեցրեց նրանց վերադառնալ Միաց. Նահ. Դաշնակցութեան գիրկը։ Միաց. Նահ. սահմանադրութիւնը վերականգնւեց, կոնդրեմն ընդունեց ուղղումներ, որոնցով Դաշնակցութեան սահմաններում ստրկատիրութիւնը վերացւում էր ընդիշտ և ստրուկներին տրում էին բոլոր քաղաքական իրաւունքները։

Այս բանից երեսում է, որ սահմանադրութեան միւս լիակատար փոփոխութեան փորձերն

արգելելը վերջ ի վերջոյ մնում է միանդամայն տնօղտուդ։ Եթէ դա կեանքի պահանջէ, անշուշտ տեղի կունենայ, լինի սահմանադրութեան համաձայն, թէ նրան հակառակ։

## IX

Յեղափոխական սահմանադիր ժողովները։

Մինչև հիմա ես խօսում էի այն սահմանագիր ժողովների մասին, որոնք գործում են գոյութիւն ունեցող սահմանադրութեան հիման վրայ, հետեւաբար այսպիսի պետութիւնների մէջ, որոնք ունեն թէ գրւած և թէ իրական սահմանագրութիւն, — իշխանութիւնը փոխադաբար սահմանափակելու իմաստով։ Բայց ներկայ սահմանադրական պետութիւնները մեծ մասամբ մի ժամանակ եղել են անսահմանափակ իշխանութիւններ։ Այն ժամանակ նրանք չեն ունեցել ոչ իրական սահմանադրութիւն, որ սահմանափակէր թագաւորի իշխանութիւնը, ոչ էլ գրւած սահմանադրութիւն, որ որոշէր այս սահմանափակ բնոյթը։

Ապա ում էր պատկանում սահմանադիր իշխանութիւնը, այն ժամանակ, երբ կատարում էր փոխանցում անսահման միապետութիւնից գէպի սահմանադրական կարգեր։ Ո՞վ է ստեղծագործել առաջին սահմանադրութիւնը։

Մի քանի պետութիւններում (Պրուսիայում և այլն) առաջին սահմանադրութիւնները չնորոնել են միավետները ընդառաջ գնալով ժողովրդի պահանջներին, որպէսզի արևելեն մօտեցող յեղափոխութիւնը կամ դադարեցնեն արդէն սկըսւածը։ Այդ տիպին է պատկանում նաև 1905 թ. ուստական սահմանադրութիւնը, եթէ միայն այն սահմանադրութիւնն կարելի է համարել։ Այն ժամանակ աչքի առաջ ունենալով սկսւած յեղափոխական շարժումը՝ Նիկոլայ Ա-ը խոստացաւ զումարել Պետական Դուման և ինքն իր միահեծան իշխանութեամբ հրատարակեց ընտրական և հիմնական օրէնքներ, որպէսզի տեղն ու տեղը ուսնարէ նրան։ Բայց անսահմանից դէպի սահմանադրական կարգն անցնելու համար կայ նաև մի ուրիշ ճանապարհ, դա յեղափոխական փոխանցումն է։ Այդ դէպրում նոր սահմանադրութիւնը մշակում է ինքը սահմանադիր ժողովը։ Բայց յեղափոխական սահմանադիր ժողովը շատ բանով տարբերում է սահմանադրութեան հիմնան վրայ գումարւած սահմանադիր ժողովից։

Մինչև յեղափոխութիւնը, Ֆրանսիան կառավարւում էր ինքնակալ թագաւորով։ Լիւդովիկոս XVII որոշեց գումարել «ընդհանուր նահանգներ» կոչւած խորհրդակցութիւնը, որպէսզի միջոցներ գտնեն, թէ ինչպէս երկրին սպառնացող մսանկութեան առաջն առնեն, և առնասարակ

պետութիւնը փրկեն այն նեղ դրութիւնից, որին հասցը ել էր անսահման իշխանութեան անկոնարոլ գործնէութիւնը։ «Ծնդհանուր նահանգներ» ժողովը բաղկացած էր երեք դասակարգերի՝ աղնւականութեան, հոգեորականութեան և այսպէս կոչւած, երրորդ դասակարգի (քաղաքացիներ և գիւղացիներ) պատգամաւորներից։ Հին ժամանակ «ընդհանուր նահանգները» բաւական յաճախ էին գումարւում. վերջին անգամ՝ 1614 թ.։ Այսուհետեւ ուժեղացած թագաւորական իշխանութիւնը կարողանում էր գործել մենակ և, իհարկէ, նրանց չէր գումարւում։ Ստեղծւած ծանր զբութեան պատճառով Լիւդովիկոսը որոշեց կենդանութիւն տալ այս միջնադարեան հիմնարկութեան։

Եսթաղրուում էր, որ «ընդհանուր նահանգները», որպէս երկրի ձայն, ցոյց կը տան վըրեկութեան ճանապարհ, պետական հսկայական ծախսերի համար նոր աղբիւրներ կը անան և խաղաղ կերպով կը ըւեն։ Լիւդովիկոսը չէր ել մտածում այդ ժողովին օրէնսդիր իշխանութիւն տալ, կամ թոյլատրել, որ նու երկար ժամանակ գոյութիւն ունենայ։

Ժողովը բացւեց 1789 թ. մայիսի 5-ին։ Սկզբում երեք դասակարգն էլ առանձին-առանձին էին խորհրդակցում և ամեն մէկն ունէր մի ձայնի իրաւունք։ Բայց երրորդ դասակարգն էլ

այնքան ներկայացուցիչ ունէր, որքան առաջին երկուսը միասին վերցրած, ուստի և միասին խորհրդակցեն աւելի ձեռնուու էր երրորդ գասակարգի համար։ Յունիսի 17-ին երրորդ գասակարգը ժողովրդական կամքի արտայայտութիւնը համարելով՝ լրեն ազգային ժողով յայտարեց և միւս երկու գասակարգը հրաւիրեց միասին խորհրդակցութիւն անելու։ Յունիսի 23-ին թագաւորը «ընդհանուր նահանգների» ընդհանուր ժողովին մի ճառ ուղղեց, որի մէջ խօսում էր այն բարեկների մասին, որ ինքն է արել և մտածում է շարունակ ժողովրդի համար, և ապա հրամայեց, որ ցրւեն՝ և յաջորդ օրն ամեն մի գասակարգ իր առանձին ժողովն ունենայ։ Այս խօսքերից յետոյ նա դուրս եկաւ, նրան նետեց ազնւականութեան և հոգեորականութեան մեծ մասը։ Բայց երրորդ գասակարգը և առաջին երկուսի մնացած անդամները տեղերից չշարժւեցին։

— Պարոններ, ասաց արարողապետը, դուք լսեցիք թագաւորի խօսքերը։

— Այո՛, պատասխանեց Միրաբոն՝ երրորդ գասակարգի ներկայացուցիչներից մէկը, — մենք լսեցինք... Բայց աեղներիցս կշարժւենք միայն այների ուժի առաջ։

— Այդ ըստէից «ընդհանուր նահանգների» խորհրդակցութիւնը գարձաւ ազգային ժողով և

այլեւ կտակած չկար, որ յեզափոխութիւնն սկսւել էր։ Ազնւականութիւնն ու հոգեորականութիւնը, երրորդ գասակարգի մէջ ուժ զգալով՝ հարկադրած եղաւ նրան միանալ։

Յունիսի 9-ից «ընդհանուր նահանգների» խորհրդակցութիւնն սկսեց Ֆրանսիայի համար նոր սահմանադրութիւն մշակել։ Այդ օրւանից իսկ նա կոչւեց սահմանադրիք ժողով։ Սահմանադրիքը ժողովը նիստեր ունեցաւ ամբողջ երկու տարի (1789—1791 թ.)։ Նա ֆրանսիայի համար մշակեց սահմանադրութիւն, որով թագաւորի իշխանութիւնը չափազանց սահմանափակում էր և համարեայ թէ ոչչի հասնում։ Դրանից զատ նա օրէնսդրական հակայական աշխատանք կատարեց, որով ֆրանսիայի ամբողջ կեանքի մէջ լիտկատար յեղաշրջում առաջ եկաւ։ Նա վերացրեց ազնւականութեան և միւս գասակարգերի բոլոր արտօնութիւնները, ճորտական իրաւունքը, որ մինչ այդ գոյութիւն ուներ ֆրանսիայում, նա յայտաբարեց ըոլորի հաւասարութիւնը օրէնքի առաջ և այն։

Սահմանադրիք ժողովի գործնէութիւնն, ի հարկէ, կիւղովիկոս Խն-ին և նրա կողմանից ազնւականութեանը չէր կարող հաճելի լինել, թէև վերջինս մասնակցում էր ժողովին։ Բայց թագաւորն անուժ էր։ Սահմանադրիք ժողովը համակրութիւն էր գտնում ժողովրդական մասսա-

ների մէջ։ Դեռ 1789 թ. յուլիսի 14-ին Պարի-  
զում ապստամբութիւն տեղի ունեցաւ։ Ժողո-  
վուրդը յարձակումով գրաւեց Պարիզի ամրոց  
Բաստիլը, որ քաղաքական յանցաւորների հա-  
մար ծառայում էր իրեն բանտ, և ազատեց բո-  
լոր քաղաքական բանտարկեալներին։ Ապա տե-  
ղի ունեցան մի շարք ուրիշ ապստամբութիւն-  
ներ։ Թագաւորը յեղափոխութեան դէմ զայրա-  
ցած 1791 թ. յունիսին, իր ընտանիքի հետ  
գաղտնի փախաւ Պարիզից, բայց արտասահմանի  
ճանապարհին բռնւեց և բռնի կերպով բերւեց  
Պարիզ։

Սյապիսով այս սահմանադիր ժողովի բնորոշ  
գիծն այն է, որ նա գումարւել էր ոչ թէ իրեն  
սահմանադիր կամ նոյն իսկ օրէնսդիր ժողով,  
այլ որպէս մի խորհրդաժողով։ Բայց նա իրեն  
ազգային յայտարարեց և իր ձեռքն առաւ սահ-  
մանադիր իշխանութիւնը։ Նա, ըստ իր ձեփ,  
ինքնիշխան չէր։ Սահմանադիր ժողովի բոլոր ս-  
րոշումներն ստորագրում էր թագաւորը և տեսա-  
կանորէն ենթադրում էր, որ նա կարող է այդ  
մերժել։ Բայց, փաստօրէն, նա ստիպւած էր տե-  
ղի տալ։ Սյնուամենայնիւ դա մի կատարեաւ  
ինքնիշխան սահմանադիր ժողով չէր։ Գումարւած  
թագաւորի հրաւերով, գործելով նրա կողքին,  
վնելով թէկ յեղափոխական և զգալով իր ուսքի  
տակ որոշ հոդ, մանաւանդ Պարիզի յեղափոխա-

կան տրամադրութիւն ունեցող մասսաների մէջ,  
— այդ սահմանադիր ժողովը միջին տեղն էր բըռ-  
նում արդէն վերևում յիշւած սահմանադրութեան  
հիմունքներով հրաւիրւած և յեղափոխական սահ-  
մանադիր ժողովների մէջ, որոնց մասին յետոյ  
ենք խօսելու։ Բայց իր կատարած հակայական  
բարեփոխիչ աշխատանքով նա բարձր է կանգնած  
շատ, նոյնիսկ յեղափոխական սահմանադիր ժո-  
ղովներից։ Հին, բոնակալական, ազնւական-աւե-  
տական և ճորտատէր Ֆրանսիան տապալւեց և  
իր տեղը զիջեց նոր, ազատ Ֆրանսիային։ Սյդ  
երկրի առաջին սահմանադիր ժողովի գործն  
այդ էր։

1791 թ. սեպտեմբ. 30-ին սահմանադիր  
ժողովը փակւեց։ իրաւաբանօրէն նա վաղուց էր  
փակւած թագաւորի հրամանով, բայց փաստօրէն  
փակւեց իր սեփական ցանկութեամբ այդ ժա-  
մանակ, որովհետեւ իր գործը համարեց վերջաց-  
րած։

Բայց միւս օրն իսկոյն բացւեց մի նոր ժո-  
ղով—այս անգամ արդէն օրէնսդիր ընտրութիւն-  
ները կատարւած էին դեռ սահմանադիր ժողովի  
նիստերի ժամանակ։ Սյս օրէնսդիր ժողովը  
պէտք է գործէր իրեն Փրանսիական պարլա-  
մենտ—արդէն օրէնսդիր և ոչ թէ սահմանադիր  
իշխանութեամբ։ 1791 թ. սահմանադրութեան

մէջ ասւած էր, որ նա վերաքննուել և փոփոխուել կարող է 10 տարուց ոչ շուտ:

Սկզբում թւում էր, թէ Ֆրանսիան իսկապէս մի սահմանադրական երկիր դարձաւ, որ Լիւդովիկոս ԽVI պէտք է իշխի՝ ունենալով միայն շատ սահմանափակ իշխանութիւն, ինչպէս անզիփական թագաւորը, որ անզիփական պարլամենտի նման օրէնսդիր ժողովն իր ձեռքում պիտի կենտրոնացնի օրէնսդրական իշխանութիւնը:

Բայց Փրանսիական թագաւորական իշխանութեան բնոյթն անհնարին էր դարձնում կանոնաւոր սահմանադրական միապետական կենցաղը: Լիւդովիկոս ԽVI գաղտնի լուր տւեց օտար միապետներին, որ ինքը կամաւոր կ'ըպով չի տւել սահմանադրութիւնը, որ իրեն հարկադրել են, իսկ յետագայում արդէն Պրուսիայի և Աւստրիայի հետ պատերազմելու ժամանակ նա դաւաճանօրէն շարունակում էր յարաբերութիւն ունենալ թշնամի երկների հետ: 1792 թ. օգոստ. 10-ին՝ Պարիզում ապատամբութիւն ծագեց, որից ազատւելու համար Լիւդովիկուն օրէնսդիր ժողովին ապաստանեց: Բայց ժողովը վճռեց զրկել նրան իշխանութիւնից, ձերբակալել իսկ Ֆրանսիայի ապագայ պետական կազմը ուղղելու համար արտակարգ ազգային կոնւենտ գումարել: Ժողովը կոնւենտի համար ընտրական

օրէնք մշակեց: Ընտրական սկզբունքը համարեաթէ ընդհանուր էր՝ (մի քանի սահմանափակումներով) և հաւասար, բայց երկաստիճան: Այսպիսով օրէնսդիր ժողովը մի տարի հազիւ անցած խախտեց 1791 թ. սահմանադրութեան 10-ամեայ ան ձեռնամիւնիութիւնը: Այնուհետև օրէնսդիր ժողովն ինքն իրեն ցրւեց:

Կոնւենտը Ֆրանսիայի երկրորդ սահմանագիր ժողովն էր. պատմութեան մէջ նա մնաց սահմանադիր ժողով, իբրև ամենատիպիք յեղափոխական սահմանադիր ժողովը, թէև երբէք այդպիսի անուն չի կրել, այլ միշտ կոնւենտ է կոչւել: Հակառակ առաջին սահմանադիր ժողովի, որ հրաւիրւել էր ոչ միայն իբրև ոչ-սահմանադիր, այլ նոյնիսկ ոչ օրէնսդիր ժողով, կոնւենտը գումարեած էր յատկապէս սահմանադրութիւն մշակելու նպատակով և հետևաբար կատարեալ սահմանադիր իշխանութիւն ունէր:

Բայդ դրանով նա չէր կարող բաւականանալ. դարեւը, հին միապետական շէնքը խորտակւել էր, պէտք էր ստեղծել բոլորովին նորը. ուրիշն կոնւենտը պիտի կազմէր ոչ միայն նոր սահմանադրութիւն, այլ և օրէնքներ հրատարակէր, կառավարէր և նոյնիսկ դատեր վարէր:

Կոնւենտի առաջ պիմաւորապէս դրւած էր ոչ թէ սահմանադրութիւն մշակելու հարցն առանձարակ, այլ սահմանադրական խնդիրներից ա-

մենակարեորը լուծելու մտահոգութիւնը. նա  
պէսք է ուոշէր վերաբերմունք դէպի արքայա-  
կան իշխանութիւնը և երկրի կառավարչական  
ապագայ ձեւ:

Թագաւորն արդէն բռնւած էր, որպէս թրշ-  
նամի երկրների հետ դաւաճանարար կազ պահ-  
պահող. նա նստած էր բանտում, արքայական  
տան անդամներից շատերը կուռում էին թշնամի-  
ների բանակում, ֆրանսիայի գէմ: Հետեաբար,  
իրերի զրութեամբ, հարցն արդէն նախորոշած  
էր. և կոնւենտը, 1792 թ. սեպտեմբ. 12-ին  
հէնց առաջին նիստում, առանց վիճաբանութեան,  
որոշեց վերացնել թագաւորական իշխանութիւնը  
և հասարակալետութիւն հրատարակել: Ապա  
ոկտեց նախկին սահմանադիր ժողովի աշխա-  
տանքների շարունակութիւնը՝ ֆրանսիական պե-  
տական և սոցիալական նոր շէնքի կառուցման  
մեծ զործը, որ երեք տարի տեսց: Մշակեց նոր  
սահմանադրութիւն, որ վերջացաւ 1795 թ. ըն-  
դունեցին ֆրանսիայի պետական և հասարակա-  
կան կեանքին վերաբերեալ մի շարք շատ կարե-  
ռոր օրէնքներ: Կոնւենտը հոգ տարաւ բարե-  
գործութեան և քաղցած երին պարենաւորելու  
մասին, ընտանիքի, ստացւածքի. և ժառանգու-  
թեան վերաբերեալ մի քանի օրէնքներ հրատա-  
րակեց, պատրաստեց նոր քաղաքացիական օ-  
րէնակրքի նախազիծը. ժողովրդական լուսաւո-

բաւթեան համար ահազին գործ կատարեց՝ բա-  
նալով, կամ բարեփոխելով մի շարք կրթական  
հիմնարկութիւններ, հիմնելով բազմաթիւ թան-  
գարաններ, զրադարձններ, արխիւններ, ցուցա-  
հանդէմններ և այլն. վերջապէս հրատարակեց պար-  
տադիր, ձրի ուսում, որ չիրականացաւ: Կոնւեն-  
տը բարեփոխեց վարկերի մասին եղած օրէնք-  
ները. մտցրեց նոր հասարակապետական օրա-  
ցոյց՝ սովորական քրիստոնէական օրացոյցի փո-  
խարէն: Այսպիսով թէ սահմանադիր, և թէ օ-  
րէնադիր իշխանութիւնն ամբողջովին կենտրոնա-  
ցած էր նրա ձեռքում:

Կոնւենտի գումարման ժամանակ, մշտական,  
օրինական իշխանութիւն գոյութիւն չունէր. թա-  
գաւորը ձերբակալւած էր, հասարակապետու-  
թեան նախագահ չկար: Օգոստոսի 10-ից յետոյ  
օրէնսդիր ժողովը նշանակեց մինիստրութիւն,  
(որի մէջ մտնում էին Ռուլլանը և Դանտոնը),  
Բայց դա միայն ժամանակաւոր կառավարու-  
թիւն էր:

Եւ կոնւենտը նշանակում ու փոխում էր  
մինիստրներին, հրամանատարներին և, առհասա-  
րակ, բարձրաստիճան պաշտօնեաններին: Այսպի-  
սով գործադիր իշխանութիւնը գտնուում էր ամ-  
բողջովին նրա ձեռքին:

Ասպէս թէ այնպէս, պէտք էր թագաւորի  
բախտը վճռել: Կոնւենտը որոշեց նրան դատի

յանձնել և ինքը դարձաւ բարձրագոյն դատարան։ Ինքն էր հարցաքննում ձերբակալւած թագաւորին, վկաներին, մեղադրաւողներին, թագաւորի ընտրած պաշտպաններին և, վերջի վերջոյ, նրան մահւան դատապարտեց։ Այստեղ տեղը չէ գնահատել այդ դատավճիռը Ֆրանսիայի և մասնաւորապէս ֆրանսիական յեղափոխութեան շահների տեսակէտից։ Բայց կարող է նկատել, որ այդ գործողութեամբ Կոնւենտն իւրացրեց նաև դատական իշխանութիւնը։

Կոնւենտի որոշումները վաւերացնող ոչ մի իշխանութիւն չկար և չէր էլ կարող լինել։ Նրա ընդունած որոշումներն անմիջապէս ուժ էին ստանում, դրանց թւում նաև կիւղովիկոս ԽՎահ մասին կայացրած դատավճիռը։ Կոնւենտն ինքնօրէն իրաւասու և գերիշխան մի ժողով էր։ Նա Ֆրանսիայի համար անսահման ինքնակալ էր, որ իշխում էր ոչ թէ Աստուծոյ ողորմութեամբ, այլ ժողովրդի կամքով։

Նրան սահմանափակող միակ իշխանութիւնը այն ժողովրդի կամքն էր, որից նա ընտրւած էր և որի անունից խօսում էր։ Ժողովրդի և, յատկապէս Պարիզի ազգարնակութեան կամքը, որ շատ անգամ շատ էլ չէր համապատասխանում դաւաների կամքին, վերահսկում և զեկավարում էր նրա գործնէութիւնը, և կոնւենտը յաճախ իր ցանկութեան հակառակ ստիպւած էր հաղատակ։

Եկել ու զիջել և Պարիզի Կոմունային (քաղաքացին ինքնավորութեան), որը յաճախ իրենից աւելի ուժեղ և ազդեցիկ էր լինում, և քաղաքական ակումբներին, յաճախ նոյնիսկ անկազմակերպ ամբոխին, որը մի քանի անգամ ապատամբութիւն էր ասածացրել և ստիպել Կոնւենտին ընթանալ այսպիսի ուղղութեամբ որով նա ինքն իր կամքով չէր գնայ։

1795 թ. հոկտեմբերի 26-ին Կոնւենտը դադարեցրեց իր գործնէութիւնը տեղի տալու նոր կանոնաւոր ընտրած ժողովին, որը պէտք է գործէր Կոնւենտի 111-րդ թւականին (ըստ հասարակապետական օրացոյցի, իսկ քրիստոնէական օրացոյցով 1795 թ.) մշակած սահմանադրութեան հիման վրայ։ Նոր սահմանադրութիւնն էլ երկարակեաց շեղաւ։ Հասարակապետութեան շուտով փոխարինեցին՝ նապոլէտն կայսրութիւնը, Բուրբոնների և, վերջապէս, կիւղովիկոս Ֆիլիպպի միապետութիւնը։

Ֆրանսիայի երրորդ սահմանադր ժողովը գումարւեց 1848 թ. փետրւարի 24-ի յեղափոխութիւնից և կիւղովիկոս Ֆիլիպպի թագաւորի տապալումից յետոյ։ Նա հրաւիրւեց յեղափոխութեան ժամանակ իշխանութիւն ձեռք բերած ժամանակաւոր կառավարութեան կողմից։ Ժողովը ընտրւած էր ընդհանուր ձայնատւութեամբ և նիստեր ունեցաւ 1848 թ. մայիսից մինչև 1849

թ. մայիսը: Խնչպէս և կոնւենտը, գէթ իր գոյութեան առաջին ամիսներում, նա գործողիր, օրէնսդիր և սահմանադիր իշխանութիւններ իր ձեռքումն էր կենդրոնացրել և միայն, փաստօրէն, դատական իշխանութիւններից չէր օգտում, որովհետեւ դրա կարիքը չէր զգում: Նա մշակեց սահմանադրութիւն և կազմակերպեց հասարակապետութեան նախագահի ընտրութիւնը: Նախագահ ընտրւեց Լիւդովիկոս Նապոլէոնը, որ վերջում Նապոլէոն III անւան տակ իր ձեռքը քցեց կայսերական իշխանութիւնը: Այսուհետեւ սահմանադիր ժողովն իր գոյութեան վերջին հինգ ամիսներում փաստօրէն սահմանադիր և ինքնօրէն չէր այլես, որովհետեւ սահմանադրութեամբ չէր զբաղւում, այլ գործում էր իր մշակած սահմանադրութեան շրջանակում:

Ֆրանսիայի վերջին սահմանադիր ժողովն եղաւ, այսպէս կոչւած, ազգային ժողովը՝ ընտրած 1871 թ.:

1870 թ. սկսւեց պատերազմ Գերմանիայի և Ֆրանսիայի միջև: 1870 թ. սեպտեմբերի 2-ին Նապոլէոն III կայսը 100,000-ից աւելի զօրքով Սեղանի մօտ խայտառակ կերպով գերի ընկաւ գերմանացիների ձեռքը: Երբ այս լուրը Պարիզ հասաւ, զայրոյթի մի ամբողջ փոթորիկ առաջ բերեց: Օրէնսդիր մարմինը սեպտեմբեր 3-4 դիշերւայ նիստում քննութեան առաւ կայսրին

տապալելու և ժամանակաւոր կառավարութիւն ընտրելու հարցը: Լուսաբացին ժողովուրդը ներս խուժեց օրէնսդիր ժողովի դահլիճը, որի ամենանոշակաւոր անդամներից մէկը՝ Գամբետան ժողովրդական ներկայացուցչութեան կողմից յայտարարեց, որ Նապոլէոն Բնապարտը և նրա տունն այլևս ֆրանսիայում չեն իշխում: Նոյն օրը քաղաքային ինքնավարութեան մէջ ժողովը դական բազմութիւնը կազմակերպեց «ազգային ինքնավաշտպանութեան կառավարութիւն»: Լիոնում, Մարսելում, Բորդյոյում և այլ քաղաքներում հասարակապետութիւն հրատարակւեց: Կայսրութիւնը փթած ծառի նման խորտակւեց առանց որևէ դիմադրութեան:

Այս բոլորը տեղի ունեցաւ ամենադժւարին պատերազմի եռուզեռի ժամանակ, երբ գերմանական զօրքերը, Սեղանը վերցնելուց յետոյ, արագ ու եռանդուն մօտենում էին Պարիզին: Ժամանակաւոր կառավարութիւնը պէտք է երկիրը կառավարէր և պատերազմը վարէր, այն ինչ կայսերական դեներալները դժգոհ հասարակապետութեան յաղթանակից՝ պարզապէս չէին կամենում պատերազմել: 1871 թ. յունար 28-ին գերմանացիք զրաւեցին Պարիզը, տեղի ունեցաւ զինադադար, և յաղթողների համաձայնութեամբ փետրւարի 8-ին ընդհանուր

ձայնաւութեամբ կատարւեցին ազգային ժողովի ընտրութիւնները:

Այս ժողովը 1875 թ. մշակեց սահմանադրութիւն, որի հիման վրայ (մի քանի յետագայուղումներով) մինչև այսօր և կառավարուում է ֆրանսիան:

Բայց այդ ըոպէին կարևորագոյն խնդիրը, յամենայն դէպս, սահմանադրութիւն մշակելը չը, որ հնար եղաւ 4 տարուց աւել յետաձգել: Ամենամեծ հոգու պատերազմի և խաղաղութեան հարցը վճռելն էր: Եւ հէնց այդ հողի վրայ էլ տեղի էր ունենում նախընտրական պայքարը: Պայքարը մզւում էր ոչ այնքան կայսրութեան և հասարակապետութեան կողմնակիցների, որքան Գերմանիայի առաջարկած պայմաններով անմիջական խաղաղութիւն կնքել ցանկացողների և պառերազմը շարունակելու կողմնակիցների միջև: Չափաւորականներն ու աջակողմեանները պահանջում էին անմիջական հաշտութիւն: Արմատականները ցանկանում էին պատերազմը շարունակել մինչև վերջին հնարաւորութիւն, որի պատճառով և ընտրութիւնների կշիռը գեպի աջ թերւեց: 1871 թ. մայիս 10-ին ֆրանկուրտում ազգային ժողովի համաձայնութեամբ և վաւերացումով կայացաւ հաշտութիւն, որով ֆրանսիան կորցրեց էլզաս-Լոթարինգիան և 5 միլիարդ պատերազմական տուգանք վճարեց:

Նոյն ժողովը ծանրաբեռնուած էր նաև երկիրը կառավարելու հոգուով: Ժամանակաւոր կառավարութեան փոխարքն (1871 թ. փետրվար 17-ին) Տիերը նշանակւեց օգործադիր իշխանութեան պետ» մի պաշտօն, որի մէջ ամփոփուած էին հասարակապետութեան և մինիստրական խորհրդի նախագահների լիազօրութիւնները: 1871 թ. օգոստոսի 31-ին նա երեք տարով հասարակապետութեան նախագահ ընտրվեց: Բայց ժամանակամիջոցը չըրացած (1873 թ. մայիսի 19-ին) ազգային ժողովի և Տիերի միջև տեղի ունեցան անհամաձայնութիւններ, որի հետևանքով նա նոյն ժողովին ներկայացրեց հրաժարական, որը քննութեան առարկայ գարձաւ: Ժողովում և ընդունւեց ձայնների մեծամասնութեամբ: Այնուհետև ազգային ժողովը հասարակապետութեան նախագահ ընտրեց գեներալ Մակ-Մանուիլ: Այսպիսով ազգային ժողովը՝ ուրիշ սահմանադիր ժողովների նման նաև գործադիր իշխանութիւն էր: Նա կլինէր նոյնպէս և դատական իշխանութիւն, եթէ զբա կարիքն զգացւէր:

Յեղափոխական սահմանադիր ժողովներ եղել են նաև ուրիշ երկրներում: Այսպէս, 1872 թ. Ֆերգինանդ V 11.-ին հեռացնելուց յետոյ, Սպանիայում գումարեց յեղափոխական սահմանադիր ժողով: 1874 թ. Դանիայից բաժանելուց յետոյ, նորւեգիայում գումարւած սահմա-

նադիր ժողովը յեղափոխական բնոյթ ռւնէր։ Նոյն բանը եղաւ 1822 թ. Յունաստանում Տաճկաստանից բաժանւելուց յետոյ, և 1863 թ. յեղափոխութեան ժամանակ, երբ գահնկեց եղաւ յունական առաջին թագաւոր Օտտոնը, Բելգիայում 1831 թ.՝ Նիդերլանդիայից բաժանւելուց յետոյ և այլն։

## X

Սահմանադրական եւ յեղափոխական սահմանադիր ժողովների համեմատութիւնը եւ ընդհանուր բնորոշումը։

Այսպէս, ուրեմն, սահմանադիր ժողովները հրաւիրւում են այսպիսի երկրներում, որոնք արդէն սահմանադրութիւն ունեն, սահմանադրութիւնը վերաքննելու համար։ Հրաւիրելու նախաձեռնութիւնը պատկանում է պարլամենտին, ժողովրդին (ժողովրդական օրէնսդրական նախաձեռնութիւն) կամ (դաշնակցական պետութիւններում, օր. Միացեալ Նահանգներում) դաշնակցութեան մէջ մտնող առանձին պետութիւններին։

Նրանք առհասարակ գումարւում են նոյն հիմունքներով, ինչ որ պարլամենտները, երեմն երկրորդական տարբերութիւններով։ Բայց միշտ ունեն մի պալատ, նոյնիսկ երկպալատեան պարլամենտ ունեցող երկներում։

Այդ տեսակ սահմանադիր ժողովին պատկանում է միայն սահմանադիր իշխանութիւն՝ խիստ կերպով բաժանւած օրէնսդիր իշխանութիւնից։ Երբեմն նրա իրաւունքին աւելանում են առանձնայատուկ պարտաւորութիւններ։ ազգային սահմաններն ուրիշ պետութեան զիջելը, թափուր գահի համար նոր թափաւոր ընտրելը և այլն։ Այդպիսի սահմանադիր ժողովին օրէնսդիր իշխանութիւն չի պատկանում։ Նման ժողովներում, յաճախ, սահմանադիր իշխանութիւնը սահմանադրութեան պարզուց յօդւածներով խիստ կերպով սահմանափակւած է լինում։

Եւ այսպիսի սահմանափակ շրջաններում սահմանադիր ժողովն ինքնիշխան չէ։ Սահմանադիր ժողովի որոշումները պիտի վաւերացւեն միապետի, ժողովրդի կամ (Միացեալ-Նահանգներում) առանձին նահանգների կողմից։

Այլ բնոյթ ունեն յեղափոխութեան ժամանակ գումարւած սահմանադիր ժողովները։

Նրանց գումարելու նախաձեռնութիւնը սովորաբար պատկանում է ժամանակաւոր կառավարութեան, որը և հրատարակում է նրանց համար ընտրական օրէնք։ Սահմանադիր ժողովները միշտ բաղկացած են լինում մի պալատից և մեծ մասամբ ընտրւում են ընդհանուր ընտրական հիմունքներով։

Նրանց են պատկանում սահմանադիր, օ-

ըէնսդիր, գործադիր և դատական իշխանութիւններն իրենց ամբողջ բովանդակութեամբ։ Նոքազերիշխան են, և ոչ մի այլ իշխանութիւն օրինական ճանապարհով չի սահմանափակում նըրանց։ Ռւստի և նրանց որոշումները ոչ մի իշխանութեան կողմից վաւերացւելու կարիք չունեն, իհարկէ, եթէ ինքը, սահմանադիր ժողովը, չորոշի, որ իլ մշակած սահմանադրութիւնը կամ ընդունած որեւ, օրէնքն առաջուց պէտք է համաժողովրդական քէարկութեան ենթարկվի, ուրիշ խօսքով, եթէ ինքն իր որոշումները կամովին չտայ ուժերենդումի։ Կարելի է ասել, որ այդպիսի սահմանադիր ժողովները լինելով ժողովրդական կամքի արտայայտութիւն՝ անսահման ինքնականներ են։ Փաստօրէն իւրաքանչիւր ինքնակալ միապետ սահմանափակւած է հպատակներին ենթարկելու ցանկութեան ատիճանով, ուրիշ խօսքով յեղափոխութեան վտանգով։ Սահմանադիր ժողովներն էլ բացառութիւն չեն կազմում։ Նրանք ընտրւած են, որ ժողովրդի կամքն արտայատեն։ Բայց եթէ նրանք այլ բանը վատ են կատարում, իսկ յաճախ այն դէպքում, երբ մայրաքաղաքի ազգաբնակութեան կամքը տարբերում է ամբողջ երկրի կամքից, սահմանադիր ժողովն ստիպւած է լինում։ Խառնակութիւնների և ամեն տեսակ յուղումների հնարաւորութիւններ հաջու առնել։

Ինքնըստինքեան հասկանալի է, որ բոլոր իշխանութիւնների միացումը և նրանց անսահմանութիւնը վտանգաւոր է միևնույն չափով մի մարդի ինչպէս և մի ժողովրդի ձեռքին, թէկուզ նա և լինի ընտրւած։ Առանձին անհատն, ինչպէս և ժողովը, միակերպ հարբում են իշխանութեան գինիով և տրամադիր լինում բոնութեան, Բայց երբ որ հին իշխանութեան ձեռքով ունահարւած է օրինականութիւնը և տակնուվրայ է արած իրաւունքի հողը, այլև յեղափոխութիւնը դառնում է անհրաժեշտութիւն, և կանոնաւոր պետական կազմի համար սահմանադիր ժողովի դումարումը միակ ճանապարհն է, որով չգնալը կլինէր անմտութիւն։



ՀԱՅ ԵՅԴ, ԳՈԾՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ՅԱՄԱԶ» ԳՐԱ-  
ԴԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Ա 62.	Հ.	Յաշնակցութեան հայերէն ծրագիր	20 կ.
Ա 63.	Նախը ոռուսէրէն	.	20 կ.
Ա 64.	Հ.	Կապազոյն ծրագիր հայերէն	10 կ.
Ա 65.	Նախը ոռուսէրէն	.	10 կ.
Ա 66.	Նուճը վրացերէն	.	.
Ա 67.	1917 թ. ապրիլի 6—12 Հ.	Յայունական ժողովի սրչութեանը	15 կ.
Ա 68.	Նախը ոռուսէրէն	.	15 կ.
Ա 69.	Նովոսունձիլի. Ի՞նչ է իրաւական ովհանութիւն (II հրատ.)	Թարգմ. Գ.	1 ռ.
Ա 70.	Ա. Օքելեան. Ժողովրդագար բնորութիւններ (II հրատ.)	Թարգմ. Գ.	20 կ.
Ա 71.	Նովոսունձիլի. Աղջային հարցը, Աւտօնոմիան և Ֆեդերացիան. Թարգմ. Գ.	Ա.	25 կ.
Ա 72.	Ֆ. Լասար. Սահմանադրութեան էռեթեան մասին, թարգ. Լ. Բարայեան (II հրատ.)	50 կ.	.
Ա 73.	Վ. Վ. Վայովովսկի. Սահմանադիր ժողով. Թարգմ. Գ.	Ա.	1 ռ.

---

Պահանջար պահանջմ Ե. Տիֆլիսъ, Լермонтовская  
№ 12 Библиотека «АРАЧЬ»: